№ 117 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 2 ՅՈՒՆԻՍԻ

1910
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 2 ՅՈՒՆԻՍԻ № 117

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ
6 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թուրքիա՝ 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°" ֆիրմայի միջոցով՝ Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Աղալօ Աբրահամովիչ և Սոֆիա Ալօեվնա, Նունէ, Աստղիկ և Մնացական Ամիրբէգեանները, Մարիամ Վարդանեանցը, Օլիա և Գրիգոր Սահակեանները խորին վշտով յայտնում են ազգականներին, ծանօթներին և հանգուցեալի ընկերուհիներին՝ առաջին երկուսն իրանց վաղամեռիկ դստեր, միւսներն իրանց սիրելի և անմոռանալի քրոջ, իսկ վերջինն իր թանգագին կնոջ՝ IV գիմնազիական և Զգրաշէնի դպրոցի վարժուհի

ՍԱԹԵՆԻԿ ԱՄԻՐԲԷԳԵԱՆԻ

մահվան մասին, որ տեղի ունեցաւ մայիսի 30-ին։ Ամբիծքը հանգուցեալի բնակարանում (IX уч., Церковная ул. д. № 14) այսօր, չորեքշաբթի, երեկ. ժ. 7-ին։ Յուղարկաւորութիւնը վաղը, հինգշաբթի, առաւօտեան ժամը 10-ին դէպի Թանդոյեան եկեղեցին։ Թաղումը Կուկիայի գերեզմանատանը։ 671. 1—1

ԱՒՏՈՄՕԲԻԼԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՋՈՒԼՖԱ—ԹԱՒՐԻԶ

Ճանապարհորդների աւտոմօբիլային երթևեկութեան օրերը փոխված են.—Թաւրիզից դուրս է գալիս երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 9-ին (փոխանակ երկուշաբթի և չորեքշաբթի)։ Ջուլֆայից դուրս է գալիս երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը (փոխանակ երեքշաբթի և ուրբաթ)։

(2, 6, 10) առ. 678. 2—1

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ

Յանձնարարվում են առևտրական ֆիրմաներին հաշւապահներ, նրանց օգնականներ, գանձապահներ և առեւտր. այլ ծառայողներ՝ դասընթացքներն աւարտած անձերից, որոնք վկայված են իրանց գովելի գիտութեամբ և անաղարտ վարքով։ Դիմել՝ Թիֆլիս, Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻՆ։ (չ.ու.կ) (ա) 590. 5—5

Չորեքշաբթի, յունիսի 2-ին, երեկ. ժ. $7^{1}/_{2}$-ին
ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
Նշանակված է
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
(Շարունակութիւն մայիսի 29-ի)
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿ.
Ընթացիկ հարցն է՝ ընտրութիւն վարչութեան անդամների և փոխանդամների։

ՄԻ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԹՈՎ

I

Տխուր խորհրդածութիւններ է առաջ բերում մի նշանաւոր յոբելեան։

Դա Թիւրքահայերի սահմանադրութեան յոբելեանն է։

Արդարև, մի՞թէ այդպիսի տարտամ և թոյլ տրամադրութեամբ պէտք է Թիւրքիայի հայութիւնը վերաբերվէր իր ազգային սահմանադրութեան յիսնամեայ յոբելեանին։

Բայց դա իրողութիւն է։

Քիչ էր մնացել, որ նոյն իսկ մոռացվի այդ յոբելեանը։

Յիսուն տարի գոյութիւն ունեցող մի այնպիսի հանրային խոշոր հիմնարկութիւն, ինչպէս ազգային սահմանադրութիւնն է, որ իր սկզբնաւորութեան առաջին տարիները սնդել էր յուսաժպիտ հրաշագործ տենչեր և իր գործունէութեան ընթացքում յաճախ թելադրել ազգաշինական բազմաճիւղ ծրագիրներ, այսօր իր կէսդարեայ կեանքից յետոյ նուազ, շատ նուազ ձայնով միայն յիշեցնում է իր անցեալի և իր նշանակութեան մասին։

Եթէ այդ հանգամանքը տեղի ունենար Աբդիւլ-Համիդի օրով, մենք կասէինք. թէ արտաքին պայմանները ազդել էին մարդկանց զգացմունքների արտայայտութեան վրա և հնարաւորութիւն չէին տուել հայութեանը երևան հանելու իր վերաբերմունքը դէպի ազգային ներկայացուցչութեան և ներքին ինքնավարութեան այն կազմակերպութիւնը, որ խտացրել էր իր վրա և իր շուրջը այնքան իղձեր, փափագներ և նախագիծներ։

Կ. Պոլսում աշխատել են տօնը կատարել փոքր ի շատէ հանդիսաւոր կերպով. բայց դա այն տօնը չէ, որ կատարվում է ինքնաբերաբար, որը արդիւնք է անհուն ոգևորութեան և որը ներկայանում է իբրև հանրային խնդակցութեան և բերկրանքի մի հանդէս։ Ոչ։ Դա մի տօն է եղել, որի մասին յիշեցրել է օրացոյցը և հոգ է տարել արարողապետական զգաստութիւնը։

Դժբաղդաբար այդպէս է իրականութիւնը։

Կ. Պոլսից դուրս աւելի ևս թոյլ է եղել տօնակատարութեան հմայքը և շատ տեղ նոյնիսկ չեն յիշել տօնի մասին։

Ինչո՞ւ ազատութեան օրերում հայ հասարակութիւնը ներկայանում է իբրև լքված, սնանկացած մի մարմին։

Ինչո՞ւ այնտեղ, ուր ժողովրդին իրաւունք է տրված արձակ-համարձակ յայտնելու իր սրտի բոլոր զեղմունքները, տիրում է ծանր տրամադրութիւն, կարծես համակված մի ճնշող մղձաւանջի յուսահատական շնչով։

Չը կայ ոգևորութիւն։ Եւ չը կայ ցանկութիւն տօնախմբական վերամբարձ թռիչքների համար։

Հոգեբանական այդ երևոյթը հայ հասարակական կեանքում արժանի է խոր ուշադրութեան։

Եւ եթէ վերլուծութեան ենթարկվէր այդ խնդիրը իր բոլոր ընդարձակութեամբ, մենք կունենայինք ուսանելի նիւթ շահեկան խորհրդածութիւնների համար։

Անկասկած՝ Թիւրքահայի տրամադրութեան վրա խորապէս պէտք է ազդէին այնպիսի եղելութիւններ, ինչպէս են Ադանայի կոտորածները և այն սպառնալիքների ուրուականը, որոնք լսվում են Փոքր Ասիայի խորքերից քիւրդական և ուրիշ անհանգիստ տարրերի շարժումների մասին։

Բայց այդ ազդեցութիւնները կարող էին ամենևին արգելք չը լինել ազգային սահմանադրութեան յոբելեանի կատարման, այլ ընդհակառակը մի առանձին ներքին ոյժ և նշանակութիւն ընծայել յոբելեանական տօնակատարութեանը։ Մեր խօսքը հանդիսաւորութեան մասին չէ և արտաքին փայլի, այլ յոբելեանի ներքին իմաստի և կարևորութեան մասին։

Ոչ։ Ադանայի, Զէյթունի և քիւրդական բարձունքների ազդեցութիւններից դուրս գոյութիւն ունեն հանգամանքներ, որոնք առաջացրել են տարտամ տրամադրութիւն Թիւրքահայ հասարակութեան մէջ։

Հետաքրքրական է վերլուծութեան ենթարկել այդ հանգամանքների էութիւնը և բնաւորութիւնը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերհոֆ, 31 մայիսի

Մայիսի 30-ին Պետական Դումայի նախագահը ներկայացաւ Կայսրին։ Ունկնդրութիւնը շարունակվեց մէկ ժամ։ Դումայի նախագահը բաղդ ունէր ներկայացնելու Նորին Մեծութեանը մանրամասն զեկուցում գործերի ընթացքի մասին Դումայում, անցեալ նստաշրջանում։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 31 մայիսի

Խորհրդակցութեան նիստում ֆրակցիաների ներկայացուցիչների մասնակցութեամբ Գուչկով հաղորդեց, որ Դումայի նիստերը իրապէս կաւարտվեն յունիսի 5-ին. երկու ժողովների արձակման ուկազը տեղի կունենայ միաժամանակ։ (Հ. Գ.)

Լոնդոն, 31 մայիսի

Համայնքների ժողով։ Սամուէլ և Ռոբէրտս հարցրին սըր Էդուարդ Գրէյին՝ թէ արդեօք նա ստացե՞լ է այն որոշման պատճէնը, որ ընդունել է չէֆիլդեան առևտրական պալատը, որը երկիւղ է յայտնում ռուսաց կայսերական կառավարութեան ենթադրութեան առիթով զրկել Ֆինլանդիան նրա տեղական ինքնավարութիւնից մաքսային սակագնի և այլ առևտրական գործերի վերաբերմամբ, որ կարող է աննպաստ ազդեցութիւն ունենալ անգլօ-ֆինլանդական աճող առևտրի վրա. երկրորդ, արդեօք Գրէյը առաջադրութիւն արե՞ց կամ մտադի՞ր է անել ռուսաց կառավարութեանը Ֆինլանդիայի ինքնավարութիւնը պահպանելու մասին։ Գրէյ պատասխանեց. «Ես հաղորդագրութիւն ստացայ, որի մասին խօսվում է, սակայն բրիտանական կառավարութիւնը չէ կարող այնպիսի առաջադրութիւններ անել, որոնք միջամտութիւն առաջացնէին բարեկամ պետութեան ներքին գործերում, որը չէ յենվում դաշնագրային իրաւունքի վրա։ Ես նոյնպէս տեղեկութիւններ չունեմ, որ անմիջապէս խօսք լինէր որևէ փոփոխութեան մասին առևտրական յարաբերութիւնների շրջանում»։ (Հ. Գ.)

Բեռլին, 31 մայիսի

Երէկ անձրևախառն սաստիկ փոթորկի ժամանակ կայծակը խփեց ծածկին Պլէվէնզում, Բեռլինի արուարձանում, որի տակ անցորդները պաշտպանութիւն էին որոնում անձրևից։ Սպանված է վեց մարդ, ծանր վիրաւորված են 13 հոգի։ Վերջիններին յոյս կայ փրկելու։ (Հ. Գ.)

Հռոմ, 31 մայիսի

«Օսէրվատորէ Ռոմանո» լրագրում տպված է. «Սուրբ գահը, արժանահաւատ աղբիւրից տեղեկութիւն ստանալով, որ առաջիկայում հրատարակվելու է Մադրիդում թագաւորի հրովարտակը, որով խախտվում է կոնկորդատը, որը երէկ արդէն տպված էր Մադրիդի լրագրում, բողոք ներկայացրեց սպանական կառավարութեանը»։ (Հ. Գ.)

Սէրաևօ, 31 մայիսի

Կայսրը նշանակեց մահմեդական Ալի-բէգ Ֆիրդուսիին նախագահ, իսկ սերբիացի Վօյսլավ Սոլին և խորվատ Նիկոլա Մարդինին բօսնօ-հերցէգօվինեան սէյմի փոխ-նախագահներ։ (Հ. Գ.)

Կալէ, 31 մայիսի

Երեկոյեան էլի երեք դիակ գտան ստորջրեայ «Պլիւվիօզ» նաւակից, որոնց թւումն էր նաւի հրամանատարի դիակը։ (Հ. Գ.)

Սէնտ-Պօլ (Միննէսօտա շտատ), 31 մայիսի

Ռուզվէլտի անուան կլուբում տեղի ունեցած ճաշին որոշվեց կազմել նոր կուսակցութիւն երկրի բնական հարստութիւնները մենաշնորհ դարձնելու ձգտումների դէմ ժողովրդի իրաւունքները պաշտպանելու համար։ Դեռ ևս անուն չունեցող կուսակցութեան գլուխ են կանգնում Ռուզվէլտ, ներքին գործերի նախկին քարտուղար Հարֆիլդ և և ուրիշները։ (Հ. Գ.)

Բաթում, 31 մայիսի

Չակվայի մօտ մարդատար գնացքի առաջին կարգի կուպէում չը պարզված պատճառից պայթիւն առաջացաւ։ Կուպէն ջարդուփշուր է եղած։ Սաստիկ վնասվեց այրուածքներից ամարանոցատէր Լիւբաշկին։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Զմիւռնիա, 31 մայիսի

Բոյկոտին ղեկավարող կոմիտէտը որոշեց բոյկոտի ենթարկել յունական նաւերը, ապրանքները և վաճառականներին։ (Հ. Գ.)

Սոֆիա, 31 մայիսի

Թիւրքաց Թագաժառանգ Իւսուֆ-Իզզէդդին ներկայ էր ներկայացմանը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՋՐՀԵՂԵՂԸ՝ ԼՈՒՍԱԲԱՆՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՄԲ *)

(Ճամբոլդ)

Բրիտանական թանգարանում կարելի է տեսնել մի հաւաքածու՝ կազմված 22,000 թրծված աղիւսակներից, որոնք գտնվել են Միջագետքում, Նինուէի աւերակների պեղումների ժամանակ։ Այդ աղիւսակները մանրատառ սեպաձև գրուածքներ են և համարվում են աշխարհիս ամենահին գրադարանը։ Գրադարանը հիմնել է ասորաց Սարդանապաղ թագաւորը, որի թագաւորութիւնը տևել է 668—626 թիւը՝ Քրիստոսից առաջ։ Այս գրադարանի սեպագիր աղիւսակների միջև կան յուշարձաններ, որոնք ընդգրկում են ասորի գրականութեան բոլոր ճիւղերը՝ պատմութիւնը, աստղաբաշխութիւնը, բժշկականութիւնը, վիպասանութիւնը, քաղաքացիական ու քրէական իրաւասութիւնը, առևտրական փաստաթղթերի հաւաքածուն և այլն։ Սարդանապաղի գրադարանի մակագրութիւնների ընտրութիւնն անգին նիւթ է հայթայթել կուլտուրայի պատմութեանը։ Բանից երևում է, որ եւրոպական քաղաքակրթութեան ողջ աղբիւրը պէտք է փնտռել Յառաջաւոր Ասիայում, ասորաբաբելականների միջև, սեմական ծագում ունեցող մի ժողովրդի, որ լեզուով շատ մօտ է հին հրէաներին ու փիւնիկեցիներին։

Այս ժողովուրդները ասորաբաբելական կուլտուրը տուել են յոյներին ու հռոմայեցիներին, ընդ նմին և ժամանակակից բոլոր ժողովուրդներին։ Ի միջի այլոց, յիշենք այստեղ այն, որ, 1902 թւին, Սուզիում յայտնագործվեց շատ նշանաւոր մի յուշարձան-սիւն՝ դիօրիտի, որի վրա բաբելական սեպագիր նշաններով գծագրված է օրէնսդրութիւնը Համմուրաբի թագաւորի, որ կառավարում էր Բաբելոնը՝ սրանից մօտ 4100 տարի առաջ։ Այս օրէնքները, որոնք համարվում են ամենահինը՝ աշխարհում եղածներից, անշուշտ, ազդեցութիւն են ունեցել Եւրոպայի ժամանակակից օրէնսդրութեան վրա՝ փիւնիկեցիների, հրէաների, յոյների ու հռոմայեցիների միջոցով։ Ու պէտք է խոստովանել, որ հանճարեղ Համմուրաբին իրաւունք ունէր ասելու գովասանական մակագրութիւններից մէկում իր մասին. «Ես՝ Համմուրաբիս, ամենահզօր թագաւորս, բաբելական թագաւորս, աշխարհի չորս երկրի թագաւորս, պետութիւն հիմնողս, թագաւոր, որի սխրագործութիւնները հաճելի են Շամաշ աստուծուն (արևի աստուծուն) և Մարդուկ աստուծուն, ես ինքս եմ։ Ես՝ Համմուրաբիս, երկիրը շինողս» և այլն։

Սակայն վերադառնանք Նինուէի գրադարանին։ Նրա հաւաքածուների միջև, ի միջի այլոց, յայտնագործվել է մէկը, որ—ծածկանշանը բաց անելուց յետոյ—երևաց, որ մի գրուածք է Ջրհեղեղի մասին՝ ասորական աւանդութեամբ։

Ահա թէ ինչ է պատմվում այդ հին լեգենդայի մասին։

Ծովի աստուած Էան ներկայ էր աստուածների ժողովում, որտեղ վճռվել էր՝ ջնջել մարդկային ցեղը Ջրհեղեղով։ Հովանաւորելով՝ Եփրատի վրա գտնված քաղաքներից մէկի մի բարեպաշտ բնակչի, որի անունն էր Ուտնապիշտիմ (քաղդէական Նոյ), Էան հաղորդում է նրան աստուածների միտքը և խորհուրդ է տալիս շինել մի տապան (նաւ)՝ ազատելու իրան, իր ընտանիքին ու ստացուածքը։ Իմաստուն Ուտնապիշտիմը շինում է տապանը անտառի լաւ փայտից ու եղէգնից, լցնում է այն՝ արծաթով ու ոսկով, զանազան տեսակ «սերմերով», այլ և վայրենի ու ընտանի կենդանիներով, ու տեղաւորվում նրանում՝ իր ընտանիքով ու գերդաստանով։

Գիշերը բարձրացաւ սարսափելի փոթորիկ ու սկսվեց մեծ հեղեղ, որ տևեց վեց օր ու վեց գիշեր՝ անընդհատ։ Երկրի երեսին ջնջվեցին բոլոր մարդիկ։ Անգամ աստուածներն էլ մոլորվել էին, տեսնելով պատահածը, իսկ սիրոյ քաղցրաբարբառ աստուածուհի Իստարը (Աստարտան), արտասվելով, ասում էր. «Հող դառաւ նախկին սերունդը։ Իմ ծնած ամէն բան ջնջվեց ու, հիմա, նրանց դիակները, ձկների պէս, լցվում են ծովում»... Վեց օր շարունակ Ուտնապիշտիմի տապանը տարվում էր ալիքների վրա։ Վերջապէս՝ եօթներորդ օրը նա կանգ առաւ Նիզիր լեռան վրա։ Ուտնապիշտիմը բաց արեց լուսամուտը, նայեց ծովին և սկսեց բարձր աղաղակել ու կանչել մարդկանց։ «Բայց ողջ մարդկութիւնը հալվել էր կաւի պէս, նրանց դիակները տարվում էին ալիքների վրա՝ ինչպէս ծառի կոճղեր»։ Տապանի տէրը «նստեց ու լացեց, ու նրա երեսին թափվում էր առատահոս արցունքը»։

Յիշելով Էա աստուծու տուած խորհուրդը, Ուտնապիշտիմը բաց է թողնում մի աղաւնի, բայց նա վերադառնում է. յետոյ էլ՝ մի ծիծեռնակ, որ նոյնպէս վերադարձաւ. վերջապէս բաց թողեց մի ագռաւ։ Ագռաւը, տեսնելով որ ջուրն իջել է, չը վերադարձաւ։ Այդ ժամանակ Ուտնապիշտիմը դուրս գնաց տապանից՝ իր բոլոր գերդաստանով, սեղան շինեց սարի ամենաբարձր գագաթին և զոհ բերեց աստուածներին։ Աստուածներն ընդունեցին զոհը՝ ողորմածաբար. միայն Բէլ աստուածը, որ Ջրհեղեղի սկզբնապատճառն էր, շարունակ զայրանում էր և ցաւ յայտնում, որ, այսուամենայնիւ, ազատվեցին մի քանի կենդանի էակներ։ Սակայն նրան հանգստացնում են, և գթառատ Էան յորդորում է, որ այնուհետև ջնջի մարդկանց՝ աւելի մեղմ միջոցով, օրինակ՝ առիւծների և ուրիշ վայրենի գազանների միջոցով, ժանտամահով և այլն։ Բէլը համաձայնում է, մտնում է տապանը և օրհնում Ուտնապիշտիմին ու նրա կնոջը, իսկ բաբելական Իստարը, իբրև նշան՝ մարդկանց հետ հաշտվելու, «փռեց իր աղեղը, որ, նրա ցանկութեամբ, շինել էր Անուն» (այստեղ խօսվում է ծիածանի մասին)։

Սուրբ գրական աւանդութեան հետ այս լեգենդայի նմանութիւնն ուղղակի է աչքի ընկնում և կասկած չը կայ, որ Նոյի տապանի մասին տարածված պատմուածքի հիմքը՝ ասորական լեգենդան է։

Հիմա հարց է առաջ գալիս. ինչպէս պէտք է բացատրել Ջրհեղեղի երևոյթը։ Յայտնի երկրաբան պրօֆ. Զիւսը տուել է հետևեալ բացատրութիւնը։

Եթէ Ջրհեղեղն առաջացած լինէր տեղական անձրևներից ու գետերի վարարումներից, այն դէպքում տապանը պէտք է տարվէր ո՛չ թէ Եփրատի բերանից դէպի Նիզիր լեռը՝ դէպի ջրերի ընթացքի բարձունքները, այլ՝ դրա հակառակ, Եփրատից ցած՝ դէպի Պարսից ծոցը։ Ակներև է, որ Ջրհեղեղն առաջ է եկել՝ իբրև հետևանք որևէ ուրիշ ֆիզիքական երևոյթի։ Զիւսը մատնանշում է այն հանգամանքը, որ, Պարսից ծոցի մօտակայքում, ինչպէս և նրանից աւելի հարաւ՝ Հնդկական ովկիանոսում, յաճախ են տեղի ունենում երկրաշարժներ կամ, աւելի ճիշդ, ծովաշարժներ. այդ ժամանակ ծովում յաճախ կազմվում են ալիքներ, այսպէս կոչված՝ սէյսմիական ալիքներ, որոնք, հասնելով ափին, ընդունակ են առաջ բերելու երկրում՝ նշանաւոր աւերումներ։ Օրինակ. յայտնի է, որ հոկտեմբերի 11—12-ի

«Всемiрная Панорама», 1910, № 49.

ազգային թատրոնում։ Երեկոյեան Թագաժառանգը ճանապարհ ընկաւ Սոֆիայից։ Կայարանում ճանապարհ գցեցին Ֆերդինանդ թագաւորը և մինիստրները։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 31 մայիսի

Սիփեհդարը և Սարդար-Ասադը մէջլիսի առանձին յանձնաժողովի հետ միասին քննում են այն լիազօրութիւնները, որոնք անհրաժեշտ են կաբինէտին մշտական ճգնաժամերից խուսափելու համար։

Եփրեմի զօրաբաժինը ափ իջաւ Էնզէլի, Թէհրան վերադառնալիս։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

—

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրատարակել է տուել ժամանակաւոր կանոններ թեմական պատգամաւորական ժողովների և նրանց գործունէութեան շրջանի մասին։ Թեմական ժողովի պատգամաւորները ընտրվում են 4 տարով և գումարվում են ժողովի տարին մի անգամ։ Նրանց իրաւունքն է ընտրել. 1) թեմակալ առաջնորդ, եթէ թեմի աթոռը թափուր է, 2) թեմական դպրոցի հոգաբարձուներ, 3) թեմական խորհրդի անդամներ, 4) կազմել և հաստատել թեմական դպրոցի նախահաշիւը և հաշիւը, 5) հսկել թեմական-վանական կալուածների վրայ։

Թեմական ժողովը առաջնորդի պաշտօնի համար ընտրում է 4 կանդիդատ և ներկայացնում Կաթողիկոսին, որ ջնջում է ցանկից երկուսին և վերադարձնելով երկանուն ցանկը ժողովին՝ առաջարկում է ընտրել երկուսից մէկին առաջնորդ։

Ուրեմն այդ նոր հրահանգով հիմն է դըրվում թեմի եկեղեցական-կրթական-կալուածական գործերը ժողովրդի օգնութեամբ կառավարելու սկզբունքին։

Ողջունելով այդ սկզբունքը, պէտք է սակայն նկատենք, որ եթէ նոր թեմական կանոնադրութիւնը հրատարակվել էր արդէն, պէտք էր այժմեան ընտրութիւնները յետաձգվէին և չը կատարվէին, որովհետև այժմ տեղի ունեցող ընտրութիւնները կատարվում են միայն Ներսիսեան դպրոցի և թեմական խորհրդի անդամների ընտրութեան համար։ Եթէ այժմ ընտրվող պատուիրակները պէտք է համարվեն անդամներ այն թեմական ժողովի, որի համար հրատարակված է նոր հրահանգ, այդ դէպքում նրանք չունեն լիազօրութիւններ իրանց ընտրող ժողովրդից և միւս հարցերի, այն է՝ առաջնորդի ընտրութեան, կալուածների կառավարութեան մասին, որովհետև այդ ֆունկցիաների մասին պաշտօնական յայտարարութիւնների մէջ ոչ մի խօսք չը կայ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Բաթում, 24 մայիսի

Բաթումի հայոց ծխ. երկսեռ դպրոցի՝ այդ ըստ երևոյթին նորմալ, բայց էապէս պալարաւոր հիմնարկութեան մասին շատ քիչ բան է գրվել հայ մամուլի էջերում։ Այն հատ ու կտոր տեղեկութիւնները, որոնք երբեմն-երբեմն տրվել են պատահական թղթակիցների կողմից, իրականութիւնը ներկայացնելուց շատ հեռու են եղել։

Բաթումի ծխ. դպրոցը կառավարում են ժողովրդից ընտրված չորս հոգաբարձուներ երէցփոխի հետ միասին, որոնց վերջին ընտրութիւնը կայացել է անցեալ 1908/09 ուսումն. տարվայ վերջը։ 1909/10 ուս. տար. սկզբին հոգաբարձուներից մէկը, Թիֆլիս տեղափոխվելու պատճառով, հրաժարվել է. այս տարվայ մարտի վերջերին հրաժարվել է և հոգաբարձութեան նախագահը՝ նոյնպէս գործով Թիֆլիս տեղափոխվելով. հաստատ աղբիւրից տեղեկացայ, որ երէցփոխն էլ է հրաժարական ներկայացրել. ուրեմն մնում են ժողովրդից ընտրված երկու հոգաբարձուներ։ Ի՞նչ են մտադիր անելու այդ երկու հոգին. ահա մի հարց, որի պատասխանը տալու րոպէ անգամ չը պիտի յապաղեն, քանի որ շատ կարևոր խնդիրներ իրանց անյետաձգելի լուծումն են պահանջում։

Ուսումնական տարին արդէն վերջացած լինելով, նախ քան ուսուցիչների քաղաքից հեռանալը, պիտի որոշվեն նրանց մնալ չը մնալու հարցերը. որքան ինձ յայտնի է, անցեալ տարի ուսուցիչների վիճակը որոշվել է խառն ժողովում. իսկ այդ խառն ժողովը այժմ չէ կարող տեղի ունենալ հոգաբարձական օրինական կազմ չը լինելու պատճառով։

Չը նայելով ուսուցիչների ամենօրեայ դիմումներին՝ մայիսի ամսականն էլ դեռ չեն ստացել, այն պատճառաբանութեամբ, թէ դրամարկղում փող չը կայ. իսկ ամառվայ ամսականները ստանալու մասին առայժմ՝ խօսք անգամ լինել չէ կարող։ Ուսուցիչներից մի քանիսը, ի նկատի ունենալով նախկին տարիների փորձը, մտադիր են մինչև ամառվայ ռոճիկները լրիւ ստանալը չը հեռանալ քաղաքից, որպէսզի ստիպված չը լինեն քաղցի դատապարտվելու մի որևէ անծանօթ վայրում։

Իսկ ի՞նչ են անում հոգաբարձուներն իրանց դատարկ դրամարկղը մի բան գցելու, որպէսզի կարողանան հնարաւորութիւն տալ 9 երկար ամիսներ տանջվող ուսուցիչներին գոնէ ամառվայ երեք ամիսներն հանգստանալու և կազդուրվելու։

Քաղաքում արդէն լուրեր են պտտում, որ հոգաբարձուները մտադիր են վերջի V բաժանմունքը, որը անցեալ տարի ահագին դժուարութիւններով և ուսուցիչների կողմից եղած կամաւոր զիջողութիւններով բացվել էր, եկող տարվանից փակել, աւ.-ուսուցչի պաշտօնը վերացնել և այլն։ Այն հանգամանքը, որ Բաթումի հայ համայնքը եթէ ուզենայ ոչ թէ մէկ, այլ գուցէ և երկու այդպիսի դպրոց կարող է պահել, եթէ գործի գլուխ անցած լինեն կարող անձնաւորութիւններ, գալիս է հաստատելու, որ ներկայ հոգաբարձութիւնը իր մեծամասնութեամբ անկարող մարդկանցից է եղել կազմված։

Եւ եթէ ճիշդ են քաղաքում տարածված լուրերը V դասարանը փակելու և աւ.-ուսուցչի պաշտօնը վերացնելու նկատմամբ, կաւելացնենք և այս, որ այդ անկարող հոգաբարձուները իրանց ազնուութեան վրա էլ խաչ դնելով ուզում են դիմել մի շատ հին և փտած միջոցի, որպէսզի կարողանան ուսուցչական կազմից հեռացնել որոշ մարդկանց՝ իրանց «բարեկամների» խախուտ տեղերը պնդացնելու. բայց այդ նրանց չի աջողվի։ Կ.

—

Նոր-Բայազէտ, 28 մայիսի

Քննութիւններն արդէն վերջացել են տեղական դպրոցներում։ Աշակերտութիւնը մայիսի կէսից սկսած լարված հետաքրքրութեամբ՝ տենդային աշխատանքով՝ դասեր էր պատրաստում։ Սակայն շատերի համար ապարդիւն ջանքեր, քանի որ քննութիւնները բաւարար հետևանքի չեն հասցնում աշակերտութեան, և ուստի բոլորը դժգոհ են քննութիւններից։ Օրինակ մի աշակերտ, որ ուսումն. տարվայ ընթացքում լաւ պատասխանելով իր դասերը ստանում է 4, 5 թւանշաններ, յանկարծ քննութեան օրը մի որևէ առարկայից 2 կամ $2^1/_2$ է ստանում, ուստի նա մնում է նոյն բաժանմունքում կամ համարվում է վերաքննելի։ Բայց նա դժգոհում է, թէ ինչո՞ւ տարվայ ընթացքում թւանշաններ է ստացել 4—5, բայց քննութեան միջոցին 2,—$2^1/_2$։ Գուցէ քննելիս, երբ անշուշտ հաւաքվում են դպրոցական վարչութիւնները, ճնշելով կամ ամաչելով՝ հէնց մի որևէ անակնկալ դէպքից աշակերտը մոլորվում՝ շփոթվում է, չը կարողանալով դասը կարգին պատասխանել։ Եւ ահա նա դատապարտվում է մի տարի ևս նստել նոյն բաժանմունքում (ուր 2 տարի ևս նստել է), չը նայելով որ այդ իսկ աշակերտը մի ընդունակ և աւելի լաւ աշակերտ է եղել, քան մի ուրիշը, որը բաղդի բերմամբ քննութեան միջոցին լաւ է պատասխանել։

Այսպէս թէ այնպէս քննութիւնները առհասարակ վատ ազդեցութիւն են թողնում աշակերտութեան վրա. նրանք, որոնք կամ չեն փոխում դասարանը կամ թէ մի առարկայից վերաքննելի են մնում, սաստիկ ցաւ են զգում, որ չեն փոխել դասարանը, որի պատճառով թէ տարիներ են կորցնում և թէ ֆիզիքապէս և հոգեպէս տանջվում... Շատերը բարկութիւնից պատառոտում են վկայականները թւանշանների վերաբերմամբ և նոյնիսկ գրքերը. շատերը լացով օրեր են անցկացնում՝ ողբալի դրութեան մէջ ընկնելով... Գուցէ էլ աւելի անպատեհութիւնների տեղիք տրվի, եթէ նրանց հանգստացողներ և խրատողներ չը լինեն։ Մենք տեսանք թէ ինչպէս մի աշակերտ լացով-գոռալով քաշում էր հօր փէշերից՝ գալ և խնդրել տեսչին, որ իրան փոխի միւս դասարանը, քանի որ ահա երկրորդ տարին է, որ նստում է նոյն դասարանում և բոլոր առարկաներից մէկն է միայն թոյլ եղել ($2^1/_2$ թւանշան է ստացել և մնում է վերաքննելի)։ Եւ այդպէս շատ անախորժութիւններ։ Ցանկալի է, որ քննութիւնները միանգամայն վերացվէին դպրոցներից, որով և աշակերտութիւնը ազատված կը լինէր այդ ծանր կօշմարից։

Գ. Սենանեանց

—

Ներքին-Ախտա, 28 մայիսի

Ամսիս 2-ին տեղիս գիւղական հասարակութեան դատարանում կայացաւ ընդհանուր ժողով փոխատու-խնայողական բանկի բացման առիթով, նախագահութեամբ պետական բանկի պաշտօնեայ Գ. Կարաղեօզեանի։ Իբրև հիմնական դրամագլուխ՝ առ այժմ բաց է թողնված պետական բանկից 1,500 ր. 13 տարի ժամանակով, 5 տարուց յետոյ մաս-մաս վճարելու պայմանով։ Ապա տրվելու է նաև 2,000 ր. կարճ ժամանակով։ Վճռվեց վերցնել փոխառու անդամներից $12^0/_0$։ Վարչութեան նախագահ ընտրվեց Գ. Սողոմոնեան, գանձապահ՝ Գ. Սարգսեանց, հաշւապահ՝ Ա. Պետրոսեանց։ Խորհրդի նախագահ՝ Ադամիր Պետրոսեան. անդամներ՝ Թ. Փահլևանեանց, Ռ. Տէր-Անդրէասեան, Մ. Շահրազեան և Յ. Դանղեանց։ Վարչութեան ոչ մի անդամ վարձատրութիւն չէ ստանում՝ բացի բնակարանի վարձ տարեկան 20 րուբլուց։

Ցանկալի կը լինէր թէ վարչութեան և թէ խորհրդի անդամները լուրջ վերաբերվէին այդ կարևոր և օգտաւէտ գործին, որը զգալի կերպով թեթևացնում է հողագործ դասակարգի հոգսերով ծանրաբեռնված լուծը։

Եղանակները մեզանում գրեթէ բաւարար են. մատղաշ հացաբոյսերը առ այժմ առատ բերք են խոստանում. անձրևները շարունակ գալիս են. մի քանի անգամ էլ կարկուտ տեղաց, բայց վնաս չը հասցրեց հացաբոյսերին։ Մի բան՝ որ ժողովրդի ապագայ յոյսը խորտակում է—դաշտային մկներն են, որոնք այս տարի չը տեսնված քանակութեամբ երևում են։

Ռ. ք. Տէր-Գէորգեան

—

Բալախանի, 23 մայիսի

Անցեալ անգամ գրել էի, որ բալախանցի ծխականների կողմից Մեսրոպ աւ.-քահանային կրկին պաշտօնի հրաւիրելու պատգամաւորութիւն է գնացել Էջմիածին։ Այդ պատգամաւորութիւնը երկու օր առաջ վերադարձաւ տեղս։

Վեհափառ Կաթողիկոսը, ինչպէս պատգամաւորներից մէկն է պատմում, շատ սիրալիր է ընդունել իրանց և լսել պատգամաւորութեանը։

Շատ գոհ են Վեհափառից, որը երկու ժամ, առանց ձանձրանալու, մանրամասնօրէն լսել, պատասխանել և հարց ու փորձի է ենթարկել իրանց։

Ինչպէս «Մշակի» ընթերցողները մի քանի օր առաջ մեր նամակից իմացած կը լինեն, Տէր-Ոսկանեան քահ. ոչ միայն հեռացված էր Բալախանու շրջանի քահանայագործութիւնից, այլ և սինոդի վճռով քահանայական դասից հեռացված էր և հրատարակված էր («Արարատ» պաշտ. ամսագրի մէջ) աշխարհական ճանաչել նրան. բայց ներկայ Կաթողիկոսը, որ այն ժամանակ դեռ Կ. Պոլիս էր, Էջմիածին գալուց և այդ պատգամաւորութեան բացատրութիւնները լսելուց յետոյ, յիշեալ քահանային նորից մտցնում է քահանայական ցանկի մէջ, բայց չէ համաձայնվում Բալախանի Բագուի վրա հաստատել, այլ առաջարկել է նոր ծուխեր ձեռք բերել, որտեղ էլ կամենայ, բացի Բագուի շրջանից։

Այժմ հարց է առաջ գալիս Բալախանու համար յատուկ ծխատէր քահանայ ունենալը։

Ամիսներ առաջ Բալախանում, Մանթաշեանի գործարանում, ծխականների ժողով տեղի ունեցաւ, ուր ձայների մեծամասնութեամբ և գաղտնի քուէարկութեամբ ընտրվեց Խաչ. քահ. Փանեանը, որը ճեմարանական է և երկար ժամանակ ուսուցչութեան պաշտօն է վարած։

Հայր Փանեանի համար Բալախանում աշխատում են նրա նախկին աշակերտները, որոնք նախնական կրթութիւն են ստացել նրանից և այժմ համալսարանական ինժեներներ են։

Բալախանու հոգևոր աշխարհը այնպիսի մի խայտառակ դրութեան մէջ է, որ շատ ժամանակ ծխականները առանց քահանայի են կատարում թաղման կարգը... Այս ու այն նաւթահանքերում մէկ էլ տեսնում էք սունկի նման լոյս ընկան Կարսի, Ղարաբաղի և այլ շրջանից քահանաներ ու թաքար-խալֆի մի քանի ծէսեր կատարեցին, որից յետոյ այդ ինքնակոչ քահանաների մէջ ընկնում է տուրուդմփոց, վէճ, աղմուկ և որից զզվում է առանց այն էլ մեր եկեղեցուց և հոգևոր իշխանութիւնից սառած հայ բանւորութիւնը։

Վերջին ժամանակներս Բալախանում ժամանակաւորապէս նշանակված է ոչ-ծխականներից ընտրված Ղազ. ք. Յովսէփեանը Շամախու կոնսիստորիայի կողմից։

Հրաւիրում ենք հոգ. իշխանութեան լուրջ ուշադրութիւնը, որպէսզի օր առաջ ծխականների ժողով գումարէ *) և մշտնջենաւոր քահանայի հոգ տանէ, կամ թէ հաստատէ անցեալ ժողովից ընտրված Խաչատուր քահ. Փանեանին։

Պատուաւոր չէ, կարծում ենք, թեմի քթի տակ գտնված այդպիսի մի բազմահայ վայր անուշադրութեան մատնել։

Ս. Գարագաշ

ԿԵԱՆՔԸ ՋՈՒՂՖԱՅՈՒՄ

—

Ջուլֆա (ռուս-պարսկ. սահմ.), 25 մայիսի

Առևտուրը Պարսկաստանի հետ Ջուլֆայի վրայով հասել է մեծ աստիճանի, գլխաւորապէս այն ժամանակվանից սկսած, երբ երկաթուղին հասաւ մինչև այստեղ։ Անցեալ տարվայ մաքսը և ապրանքների արժողութիւնը կազմում է մի խոշոր գումար, որ ներկայանում է հետևեալ թւերով. մաքս՝ մօտ 319,503 ր., ապրանքի արժողութիւն՝ 5.439,176 ր.։ Առևտուրի այս ընդլայնմանը օգնեց և Թաւրիզ-Ջուլֆա շոսսէն։ Մինչև այդ ճանապարհի շինելը՝ ապրանքների տեղափոխումը Պարսկաստանում կատարվում էր մեծ դժուարութիւններով, իսկ այժմս այդ դժուարութիւնները հեռացված են և այդ ճանապարհով, ի միջի այլոց, շաբաթը երկու անգամ Թաւրիզից Ջուլֆա են գալիս և վերադառնում երկու աւտոմոբիլ՝ նոյնպէս շատ բարեբար դեր կատարելով։ Ապագայում առևտուրը աւելի կը լայնանայ և ապրանքների տեղափոխումը կը կանոնաւորվի, երբ աւտոմոբիլները կանգնեն ուղղակի Ռուսաց Ջուլֆա ամեն օր, որի համար ձեռք են առնված հարկաւոր միջոցներ։

Այս ամենի շնորհիւ Ջուլֆան կը դառնայ փոխադրական խոշոր առևտուրի կենտրոն և պարզ է, որ այս իսկ պատճառով կը տեղաւորի Ջուլֆան իր մէջ բաւականին ժողովուրդ։ Ջուլֆայի ազգաբնակութիւնը զուրկ է զանազան կուլտուրական հաստատութիւններից, և մինչև օրս այդ ուղղութեամբ ձեռք չէ առնված ոչ մի միջոց։ Տեղումս եղած մի քանի բանկերը (Ազով-Դոնեան, Զեղչային Փոխատու բանկեր) նպատակ ունեն ընդլայնել իրանց գործունէութիւնը և ծառայել առևտուրի շահերին, իսկ ինչ վերաբերում է ուսումնարանի և այլ դրա նման կուլտուրական հաստատութիւններին, դրանք մոռացութեան են մատնված, չը նայած որ այդպիսի հաստատութիւնների Ջուլֆացիք մեծ կարիք ունեն և այդ իսկ պատճառով շատ ընտանիքներ ստիպված են լինում իրանց երեխաներին ուղարկել ուրիշ հեռաւոր քաղաքներ, մինչդեռ կարելի էր այդ միևնոյն ծախսով հէնց այստեղ Ջուլֆայում ուսումնարան ունենալ, որից կօգտվէին չքաւոր ընտանիքների զաւակները և անուսում չէին մնայ, ինչպէս այժմ է։

Կենսական մթերքներն այստեղ նոյնպէս մատնված են մոռացութեան։ Մսի հսկողութիւնն անկանոն է, և անասուններ մորթելու համար չը կայ յարմարաւոր շինութիւն, որն անհրաժեշտ է առողջապահական տեսակէտից, մանաւանդ որ խօլերայի մուտքը Ջուլֆայից այնքան էլ հեռու չէ կարելի համարել։

Զուրկ ենք նոյնպէս յարմարաւոր շինութիւն ներկայացումների համար։

Այս ամենից պարզ է, որ չը նայած այն բանին, որ առևտուրը հետզհետէ ընդարձակվում է, կուլտուրական հաստատութիւնները դեռ մուտք չեն գործել Ջուլֆացիների անտարբեր վերաբերմունքի շնորհիւ։ Տեղական հասարակութեան իդէալն ու դէվիզը միմիայն փողն է և առևտուրի շահերը։

Բացի այս ամենից՝ Ջուլֆայում բարոյական կեանքը այնքան էլ լաւ պատկեր չէ ներկայացնում. տեղական մի քանի հիւրանոցները ծառայում են տեղական հասարակութեան համար որպէս «հասարակաց տուն», որի հետևանքն այն է լինում, որ վեներական ախտը լայնանում է, դժբաղդացնելով շատ շատերին։ Ջուլֆան աւելի շատ գինետներ ունի, քան թէ ուրիշ խանութներ։ Այդ հանգամանքը հասկանալի է դարձնում գինեմոլութեան տարածումը Ջուլֆայում։

Ասլան Տէր-Յարութիւնեան

ՖԻՆԿԵԼՇՏԵՅՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԹՈՔԱԽՏԻ ՄԱՍԻՆ

—

Եալտա, 20 մայիսի

Անցեալ անգամ գրել էի կին բժիշկ Սադիկի՝ թոքախտի դէմ մաքառելու մասին կարդացած դասախօսութեան բովանդակութիւնը։ Աւելորդ չեմ համարում այս անգամ էլ մի քանի խօսք ասել նոյն հարցի վերաբերմամբ բժիշկ Ֆինկելշտէյնի կարդացած դասախօսութեան մասին, որ մի քանի օր առաջ կայացաւ օրիորդաց գիմնազիայի դահլիճում։

Թուլակազմ երեխաների Եալտայի կլիմայական գաղութի բժիշկ Ֆինկելշտէյնը խօսեց տուբերկուլեօզի մասին մանկական հասակում։ Ինչպէս յայտնի է, Ռուսաստանում օրինականապէս արդէն թոյլատրված է «Թոքախտի դէմ մաքառող համայն ռուսական բանակի» գոյութիւնը։ Յարգելի դասախօսը, պարզելով տուբերկուլեօզի անռելիութիւնը և խօսելով բժշկական միջոցների ու բնական բարեբար ոյժերի մասին, որոնցով կարելի է կռուել տուբերկուլեօզի դէմ, պարտաւորեցրեց ունկնդիրներին այդ բանակի մէջ մտնել և բժիշկների հետ միասին գործել. բացի դրանից դասախօսը առաջարկեց ներկայ եղողներին տարածել ժողովրդի մէջ այն գաղափարը, թէ հասարակութեան գիտակից անդամների պարտքն է անպատճառ մտնել «տուբերկուլեօզի դէմ կռւող համայն ռուսական բանակի» մէջ և միահամուռ կազմակերպված ոյժերով դիմադրել մարդկութեան այդ ամենասոսկալի թշնամուն։ Դասախօսութեան ժամանակ էկրանի վրա մոգական լապտերով ցոյց էին տալիս մանրադիտական պատկերներ մարդու մարմնի մկանային, ոսկրային, ուղեղային և ուրիշ հիւսուածքներ տուբերկուլեօզային բացիլներով վարակված։ Պարզ երևում էր, թէ ինչպէս բացիլները միախմբվելով բլրակներ են կազմում (бугорчатка) և աստիճանաբար մարդու մարմինը քայքայում։ Վարակվելու մասին խօսելիս, դասախօսը բացատրեց, թէ հասակն առած մարդիկ տուբերկուլեօզով վարակվում են մեծ մասամբ օդի միջոցով շնչառութեան գործարաններից, իսկ երեխաները գլխաւորապէս վարակվում են կերակուրի միջոցով մարսողութեան գործարաններից։ Տուբերկուլեօզային բացիլները ընդունելով, օրինակ՝ կաթի հետ, ստամոքսի ու աղիքների մէջ՝ պատերից անցնում են դէպի աւշային անօթները և հաւաքվում գեղձերի մէջ։ Աւշային գեղձերի բնական դերն է մարմնի մէջ մտած վնասակար թոյներ ու միկրոբներ ոչնչացնելը, այսինքն, չը թողնել, որ նրանք արեան մէջ ընկնեն։ Չը նայելով որ բացիլների մի ստուար մասը այստեղ ոչնչանում է, սակայն ժամանակի ընթացքում նրանք ցրվում են արեան հետ մարմնի մասերում և տեղաւորվելով որևէ հիւսուածքի մէջ՝ առաջացնում են տուբերկուլեօզային հիւանդութիւն, որը զարգանալով փոխվում է թոքային իսկական տուբերկուլեօզի։ Երկար ժամանակ երեխայի հիւանդ լինելը նկատելի չէ լինում։ Գեղձախտ կոչված հիւանդութիւնը, որին մարդիկ այնքան էլ նշանակութիւն չեն տալիս, դասախօսի ասելով, նոյնպէս տուբերկուլեօզային հիւանդութեան հետևանք է և դարձեալ թոքախտի կարող է փոխվել, եթէ ժամանակին զարգացման առաջը չառնվի։ Որքան էլ մարդ զգոյշ լինի օդի և կերակուրի վերաբերմամբ, այնուամենայնիւ տուբերկուլեօզային բացիլներից չէ կարող խուսափել. ամեն մարդու մէջ նրանք ընկնում են, սակայն հարցը նրանումն է, թէ որտեղ որպիսի հող են գտնում։ Առողջակազմ մարդկանց օրգանիզմի մէջ հանդիպելով դրական ոյժերի, նրանք չեն կարողանում զարգանալ, այն ինչ թուլակազմների մարմնի մէջ նրանք հեշտութեամբ բազմանում են և քայքայումներ առաջացնում։ Այստեղից պարզ է,—ասաց դասախօսը,—որ պէտք է երեխաներին խնամել, ամեն կերպ նպաստել նրանց ֆիզիքական զարգացման, որպէսզի նրանց մարմինը վնասակար միկրոբներ ոչնչացնող դրական ոյժեր արտադրելով՝ կարող լինի դիմանալ տուբերկուլեօզային և ուրիշ նոյնանման բացիլների քայքայիչ ազդեցութեան։

Խօսելով ժառանգականութեան մասին, դասախօսը թէ իր երկարամեայ փորձառութիւնից և թէ ուրիշ հեղինակաւոր անձանց հետազօտութիւններից օրինակներ բերեց և եզրակացրեց, թէ տուբերկուլեօզային հիւանդութիւնը ժառանգաբար չէ տարափոխվում։ Նորածին երեխաների արեան մէջ երբէք չէ նկատված տուբերկուլեօզային միկրոբներ։ Ծնվելուց 3 ամիս յետոյ միայն նկատվել են բացիլները։ Այդ պատճառով պէտք է ընդունել, որ մարդիկ այդ հիւանդութիւնը ժառանգաբար ծնողներից չեն ստանում, այլ յետոյ են վարակվում։ Թոքախտաւորների զաւակները, ի ծնէ թուլակազմ լինելով, աւելի տրամադրված են լինում տուբերկուլեօզով վարակվելու։ Սակայն այսպիսի երեխաները, թոքախտաւոր ծնողների զաւակ լինելով հանդերձ, իրանք թոքախտից բոլորովին ազատ կարող են մնալ, եթէ ժամանակին հեռացվեն ծնողների ազդեցութիւնից ու հակառողջական պայմաններից և դրվեն լաւ պայմանների մէջ։ Այդ նպատակով,—ասաց դասախօսը,—անհրաժեշտ է թուլակազմ ու հիւանդոտ երեխաների համար կլիմայական գաղութ-

---

*) 6 ամիս առաջ գործ. Զաւէն վարդ. պաշտօնական յայտարարութեամբ դիմել էք նաւթահանքերի կառավարիչներին իրանց բայոններում ժողովներ գումարելու եւ պատգամաւոր ընտրելու, որը ընտրված է, բայց չը գիտենք ինչու է ուշանում։ Ս. Գ.

գիշերը, փոթորիկը՝ երկրաշարժի հետ միացած՝ Գանգէսի ստորոտներում բարձրացրեց ջուրը 6 սաժէնաչափ և առաջ բերեց այնպիսի հեղեղ, որ ոչնչացրեց մօտ 300,000 մարդ։ 1876 թւին, Բրահմապուտրայի բերանի մօտ, պատահեց հէնց նոյնանման արկած, որ հեղեղել էր 7,000 քառակուսի վերստ տարածութիւն. ու այդ ժամանակ՝ ջուրը, որ բարձրացել էր 7 սաժէն, խեղդեց 100,000 մարդուց աւելի։

Բոլորովին հնարաւոր է, որ հէնց այսպիսի սէյսմիական մի ալիք, սրանից 5000 տարի առաջ, հեղեղած լինի Միջագետքը։ Առանձնապէս կորստաբեր պէտք է եղած լինի նրա գործածերն այն դէպքում, եթէ նա առաջ լինի եկած զօրեղ, փոթորկալի քամիներից, որոնք փչելիս եղած լինեն ծովից, գետի հոսանքին հակառակ։ Այն ժամանակ երկրաշարժի ալիքը, մղված լինելով քամուց, կարող էր տարածվել գետի վրայով՝ շատ հեռու։

Բացի դրանից, պէտք է նկատի ունենալ հետևեալ հանգամանքը։ Ներկայումս Տիգրիսն ու Եփրատը, իրանց բերանների մօտ, միանում, դառնում են մի գետ՝ Շատ-իւլ-Արաբ, իսկ 5000 տարի առաջ նրանք թափվում էին Պարսից ծոցը՝ առանձին-առանձին, միայն թէ հիմակվայ բերանից 200 վերստ բարձր։ Դրա պատճառն այն է, որ, 5000 տարվայ ընթացքում, երկու գետերն էլ, իրանց պատճառած կուտակումներով Պարսից ծոցում, նրանց բերանների առջևը, հեղեղել են մի տափարակ, որ բըռնում է 200 վերստ տարածութիւն։

Այստեղից հասկանալի է, որ այն ժամանակներն երկրաշարժից առաջացած ալիքը կարող էր ողողել աւելի մեծ տարածութիւն, քան թէ հիմա, եթէ պատահէր այդպիսի զարհուրելի մի դէպք։ Նիպուր լեռները, որտեղ կանգ առաւ Ուտնապիշտիմի տապանը, գոյութիւն ունեն հիմա էլ. նրանք դրված են՝ Տիգրիսի ու Եփրատի բերաններից՝ 400 վերստի վրա։ Սրանից հինգ հազար տարի առաջ, ծովից մինչև այդ լեռները, կար միայն 200 վերստ տարածութիւն, և սէյսմիական հզօր ալիքն, առանձնապէս բացառիկ դէպքերում, կարող էր հասնել նրանց։

Բայց չը կայ ոչինչ հիմք ենթադրելու, որ նկարագրված ալիքը բռնած լինի և ուրիշ երկիրներ, բացի Տիգրիսի ու Եփրատի ստորին աւազաններից, էլ չը խօսելով նրա մասին, իբր թէ նա կարող էր հեղեղել «ողջ աշխարհը»։

Բայց ասորական աւանդութիւնն այն անցքի մասին, որ իբրապէս տեղի է ունեցել սրանից հինգ հազար տարի առաջ, փիւնիկեցիների, յոյների ու հրէաների շնորհիւ, ժամանակի ընթացքում, տարածվել է ամբողջ աշխարհում, այն էլ այնպէս, որ իւրաքանչիւր ժողովուրդ սազեցնում է իր ուզածի պէս։ Օրինակ, յոյներն ստեղծեցին բանաստեղծական մի լեգենդա Դևկալիոնի մասին։

Է. Ք. Ն.

ներ ստեղծել և այդ տեսակ երեխաներին առանձին խնամակալութեամբ ֆիզիկապէս և մտաւորապէս կրթել։

Ի վերջոյ Ֆինկելշտէյնը մանրամասն խօսեց զանազան տեղերում եղած այն ընկերութիւնների մասին, որոնց նպատակն է նպաստել երեխաների ֆիզիկական զարգացման։

Դասախօսութիւնը ամենքի վրա լաւ տպաւորութիւն թողեց։

Յար. Խաչատրեան

ՄԵՐ ՑԱՒՈՏ ԿՈՂՄԵՐԻՑ

Ընտանեկան երկպառակութիւնները յաճախ ստիպում են ամուսիններին ապրել բաժանված և կամ ապահարզանի դիմել։ Ամեն տեսակ ձևականութիւնները ցօրս էլ՝ իբրև դամօկլեան սուր կախված են նրա վրա, ուր ընտանեկան կեանքը խախտված է։

Ամուսնալուծական դատավարութիւնները երբեմն ձգձգվում են տասնեակ տարիներ, պահանջում ահագին ծախքեր և յաճախ արգելք լինում կողմերին նոր ամուսնական կեանք սկսելու։

Շատ անգամ էլ մեղաւոր կողմի քար անտարբերութիւնը աւելի դժուար արգելքներ է յարուցանում ամուսնալուծութեան՝ քան այդ պահանջում է օրէնքը։ Օրէնքը անպայման պէտք է պաշտպանէ անմեղ կողմը։ Սակայն ցաւօք սրտի պէտք է ասել, որ գտնվում են մարդիկ, որոնք կարողանում են օրէնքը իրանց շահերին յարմարեցնել։

Դէպքեր գիտենք, երբ այրը խախտելով ամուսնական կապը, ազատ կենակցում է այլ կնոջ հետ և ապահարզանի մասին չէ էլ մտածում։ Եւ երբ նրա անմեղ կինը ապահարզանի հարց է բարձրացնում, ամուսինը համաձայնվում է օգնել կնոջը այդ բանում՝ նախօրօք, ի հարկէ, իրան օգտին ստանալով որոշեալ գումար, հակառակ դէպքում սպառնում է գործը երկար քնեցնել։

Այսպիսի դէպքերում լաւ, եթէ կինը ունի կարողութիւն, իսկ եթէ ոչ՝ նրան մնում է տառապել և սպասել մինչև աննկատելի կերպով կանցնեն տարիները, երբ նրանով այլևս ոչ ոք չի հետաքրքրվի և ապահարզանն էլ նրա համար այլևս նշանակութիւն չի ունենայ։

Յաճախ պատահում է, որ այսպիսի միջոցների դիմում են այնպիսի մարդիկ, որոնք հասարակութեան մէջ քիչ-շատ դիրք ունեն. դեռ չեմ ասում, որ գտնվում են մարդիկ, որոնք նման դէպքերում միջնորդի դեր էլ են յանձն առնում։

Այսպիսի դէպքերում շատ դժուար դրութիւն է ստեղծվում նիւթական միջոցներից զուրկ կանանց համար։

Յօդուածիս առիթ տուեց հետևեալ դէպքը, որ տեղի ունեցաւ վերջին ժամանակներս։

Ծխականներիցս մէկը՝ ամուսիններ՝ տասնեակ տարի առաջ ընտանեկան գժտութիւնների պատճառով բաժանվում են իրարից։ Ամուսինը պաշտօնով տեղափոխվում է այլ տեղ և այնտեղից ապահարզանի հարց բարձրացնում։ Մինչ վիճակային կոնսիստորիան հնարաւորութիւն կունենար ամուսնալուծական քննութիւն կատարելու, պարոնը Թիֆլիսում ամուսնանում է մի այլ օրիորդի վրա, ունենալով ձեռքին դրա համար կեղծ վկայականներ։ Իր ժամանակ վիճակային կոնսիստորիան նշանակում է քննութիւն։ Քննութիւնն ապացուցանում է կնոջ անմեղութիւնը և երևան հանում ամուսնու կրկնամուսնութիւնը։ Սինոդը լսելով վիճակային կոնսիստորիայի եզրակացութիւնը, լուծում է ամուսինների պսակը, տալով կնոջն ամուսնանալու իրաւունք (ներկայումս այնպիսի հասակում, երբ նրան ամենևին հարկաւոր չէր), իսկ պարոնի երկրորդ ամուսնութիւնը ապօրինի համարելով, ենթարկում է մարմնաւոր իշխանութեան՝ մեղադրելով նրան կրկնամուսնութեան մէջ։

Անցնում է ժամանակ. Թիֆլիսի նահանգական դատարանը, առանց հարցաքննելու պարոնի առաջին կնոջը, արդարացնում է պարոնին կրկնամուսնութեան մէջ։

Կինը կորցնելով տարիները և առողջութիւնը, իրան ենթարկելով նիւթական մեծամեծ ծախքերի, ընկնելով պարտքի մէջ՝ մնում է փողոց շպրտված, ապահարզանի թերթը ձեռքին, իսկ ամուսինը, որը ամեն ստոր միջոցներով կարողացել է արդարանալ, ապրում է ազատ և անվրդով։

Ո՞ւմ դիմել և ինչ անել նման դէպքերում։

Մնում է միայն դիմել հասարակական կարծիքին, որպէսզի գոնէ այդ ձևով կարելի լինի ուղղել բարոյապէս այլանդակված արարածներին և օգնել զոհին։

Համոզված ենք, որ եթէ այդպիսի անհատները հասարակական կարծիքից ազատվեն, մարմնաւոր իշխանութեան ձեռքից փախչեն, գոնէ խղճի խայթից փախչել չեն կարող և այդ կը լինի նրանց յաւիտենական պատիժը, եթէ միայն արժանի են «մարդ» կոչվելու։

Ս. ք. Տէր-Յովհաննիսեանց

Ստաւրօպօլ

ԽՈԼԵՐԱ

Խերսօն.—Նահանգում մայիսի 11-ից մինչև մայիսի 31-ը խոլերայից հիւանդացան 122, մեռան 35 հոգի։

Վօզնէսէնսկայա (Կուբանի շրջան).—Ուրուպեան ստանիցայում խոլերայից հիւանդացան 15, մեռան 13 հոգի։

Օրեօլ.—Լիվենսկի և Տրուբչեվսկի գաւառների երկու գիւղերում խոլերայից հիւանդացան 12, մեռան 7 հոգի։

Կիէվ.—Մի շաբաթվայ ընթացքում խոլերայից հիւանդացան 41, մեռան 14 հոգի։ Նահանգում հիւանդացան 20, մեռան 8 հոգի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Քաղ. սանիտարական-բժշկական տեսուչը յայտնել է քաղ. վարչութեանը, որպէսզի ձեռնարկվեն շտապողական միջոցներ՝ մայիսի 29-ի հեղեղի ժամանակ ողողված ներքնատները դադարկելու համար, որպէսզի տարափոխիկ հիւանդութիւնների առաջը կարելի լինի առնել։

◆ Յունիսի 1-ին Թիֆլիսից մեկնեց ինժեներների և տեխնիկների մի խումբ, որը պիտի որոնումներ կատարի Բօրժօմից Կարս նոր երկաթուղու գիծ կառուցելու համար։

◆ Տեղական «Новая Рѣчь» ռուսական թերթը խօսելով Կոմիտաս վարդապետի Էջմիածնից հեռանալու առիթով՝ գրում է, թէ Կոմիտաս վարդապետը, հայ ուսեալ վարդապետներից մինը, զեկուցել է գրաւորապէս Կաթողիկոսին, թէ իր մանկավարժական գործունէութիւնը ճեմարանում բոլորովին ապարդիւն է, շնորհիւ այն պայմանների, որոնք ստեղծվել են ճեմարանում առհասարակ և իր համար մասնաւորապէս, ուստի և խնդրում է ազատել իրան ուսուցչութիւնից և թոյլատրել մեկնել Թիւրքիա, ապա Արևմտեան Եւրոպա՝ հրատարակելու համար այդտեղ իր աշխատութիւնները հայկական գեղարուեստի պատմութեան մասին։ Կոմիտաս վարդապետը յայտնում է նամակի մէջ, որ նրա աշխատութիւնները Էջմիածինը թողնում է անհետևանք, մինչ Եւրոպայում նրանց հրատարակութեան համար ֆիրմաները ծախսում են 10,000 ր., բացի խոշոր հօնօրարից, որ նա ստանում է։

◆ Մայիսի 31-ի երեկոյեան Ժողովրդական Համալսարանի վարչութիւնը որոշեց արձակել սեկցիաների ուսումնարանները մինչև աշուն։ Մայիսի 27-ին Ընկերութեան օգտին Մուշտայիդում տրված զբօսանքից զուտ արդիւնք մնացել է 800 ր.։ Վարչութիւնը պատրաստվում է որևէ ամարանոցում մի զբօսանք ևս տալ նոյն նպատակով, որպէսզի աշնանից կարելի լինի ուսումնարանական գործը աւելի կանոնաւոր հիմքերի վրա դնել։

◆ Յիշեցնում ենք, որ այսօր Հայոց Բարեգործական Ընկերութեան դահլիճում կայանալու է Հայոց Դրամատիկական Ընկերութեան երկրորդ ընդհանուր ժողովը վարչութեան երկու անդամի և երեք փոխանդամի ընտրութեան համար։

◆ Քաղաքային վարչութեան շինարարական բաժանմունքի գործավար ինժեներ Ն. Աբելեանին թոյլատրված է ծանօթանալ Փոխարքայի դիւանատան մէջ պահվող այն գործերի, յատակագծերի և առհասարակ նիւթերի հետ, որոնք կապ ունեն Թիֆլիսի տարածութեան ընդարձակման և շինարարութեան հետ, Վրաստանը Ռուսաստանի հետ միանալու օրից։

◆ Յունիսի 1-ից Թիֆլիսի քաղ. վարչութեան մէջ պարապմունքները լինելու են առաւօտեան 9—2 ժամը, իսկ քաղ. գանձարկղը բաց կը լինի $9^1/_2$—1 ժամը։

◆ Մենք երէկ հաղորդել էինք բժշկապետ Իվ. Գոմարթէլիի ձերբակալման մասին։ Այժմ իբրև լրացուցիչ տեղեկութիւն կարող ենք հաղորդել, որ նա ձերբակալված է դատաստանական իշխանութեան կարգադրութեան համաձայն և նստելու է մէկ տարի բանտ գրական մի գործի մէջ մեղադրվելու համար։ Որքան յիշում ենք, նրա դէմ դատ էր յարուցված դատաստանական իշխանութեան կողմից նրա՝ «Թէ ինչպէս մարդս իր համար Աստուած ստեղծեց» յօդուածների համար, որոնք տպվեցին այժմ դադարած «Զվէնի Կվալի» շաբաթաթերթի մէջ։

◆ Վրաց «Զվէնի Գազեթի» թերթի անցած կիրակի օրվայ համարները ոստիկանութիւնը գրաւել է։

◆ Մայիսի 27-ին Թիֆլիսի բանտի կրտսեր վերահսկիչ Պաւէլ Տարաշկեվիչը ինքնասպանութեան փորձ է կատարել ատրճանակից վիրաւորելով իրան։ Նրա կեանքին վտանգ չէ սպառնում։ Ինքնասպանութեան պատճառները ընտանեկան տարաձայնութիւններն ու անաջողութիւններն են։

◆ Կօջօրի հայոց եկեղեցում այս ամառ սովորականի նման կերգէ Բ. Բերինեանի քառաձայն խումբը։

◆ Հաղբատի վանքի վանահայր Գեղամ վարդապետ Բաբաջանեանը արձակված է իր պաշտօնից։

◆ Սղնախի գաւառի Վէգինիս-Խէվի կոչված տեղում երևացել է ժօրեխ, որը ոչնչացնում է ցանքը։

◆ Մայիսի 22-ին տեղացած կարկուտը մեծ վնասներ է հասցրել Ախալքալաքի, Երթածմինդայի, Մեսխիի և Գօրու շրջաններին։

ԼՈՒՐԵՐ ԲԱԹՈՒՄԻՑ

◆ Քանի օր է Բաթում է ժամանած մեր տաղանդաւոր երաժիշտ Կոմիտաս վարդապետը։ Պատրաստվում է յունիսի 3-ին մի դասախօսութիւն և կօնցերտ տալ յօգուտ ծխական մեր անկեալ դպրոցի։ Թէ Համբարձման տօնին և թէ այսօր՝ կիրակի՝ ս. պատարագին ներկայ էր հայր Կոմիտասը և իր սքանչելի երգեցողութեամբ զմայլեցրեց ժամաւորներին։ Հայր Կոմիտասը ուրբաթ օրը մեկնելու է այստեղից դէպի Կ. Պօլիս, այնտեղից իր ծննդավայրը և ապա Եւրոպա։

◆ Մի խումբ ստորագրողներ այսօր մի գրաւոր բողոք ներկայացրին ծխական ժողովի անունով գրված, ուր յայտնում էին, թէ հայր Կարապետ քահանայ Մալխասեանը հրաժարվել է գնալ մի ննջեցեալ թաղելու, առարկելով թէ՝ «Ես արդէն հողի վրա կարգը կատարել եմ, դուք տարէք թաղէք»։ Բողոքաւորները բաւարարութիւն էին պահանջում իրանց վիրաւորված կրօնական զգացմունքների համար։

◆ Պետական դպրոցներում հարցաքննութիւնները օրերումս կը վերջանան։ Մեր ծխական դպրոցում քննութիւններ չեղան. ասում են քննութիւնների տեղ եղել է մի բան, որի ինչ լինելը նոյն իսկ ուսուցիչներից ոմանք դժուարանում էին անուանել։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՊԱՐՍԿՈՒՀԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԹԷՀՐԱՆՈՒՄ

Ներկայ տարվայ «Театръ и Искусство» շաբաթաթերթի № 20-ում զետեղված են Առաջին Պարսկական Կանանց Բարեգործ. Ընկերութեան վարիչների՝ պարսկուհիների պատկերները և տպված է դերասանուհի և պարուհի Արմէն Օհանեանի նամակը, որ հաղորդում է, թէ ինչպէս վերոյիշեալ Ընկերութիւնը ձեռնարկել է մի շարք ներկայացումներ, որոնցից առաջինն արդէն տեղի է ունեցել Թէհրանում ապրիլի 9-ին։

Այդ օրը,—գրում է Արմէն Օհանեանը,—Պարսկաստանը կատարեալ իրաւունք ունի անուանել պատմական օր, որ նշանաւոր դարձաւ կանանց ներկայացումով և նրանով, որ առաջին անգամ ազատօրէն հանդէս եկաւ հարէմի կապանքների մէջ դեգերող գերված պարսկուհին։

Առաջին անգամն էր, որ մահմեդական կինը, մի կողմ նետելով բոլոր արգելքներն ու վտանգները, երևաց ոչ թէ միայն թատրօնի դահլիճում իբրև հանդիսական, այլ և բեմի վրա։

Դրա համար հարկաւոր եղաւ 3 ամսվայ ծանր աշխատանք, հազար ու մի նեղութիւններ ու միջոցներ, միտինգներ հարեմներում, մեծ գաղտնապահութիւն, որպէսզի մի որևէ գաժան մոլլայի դաւադրութեան պատճառով այդ ձեռնարկութիւնը չը փչանար։

Իսկ այսօր պարսկուհիները համարձակ կարող են յայտնել աշխարհին իրանց յաղթեան մասին։

Պէտք էր տեսնել անվերջ շարանը այն կառքերի, որոնք սլանում էին դէպի սադրազամի շքեղ պարտէզը։ Սադրազամը սիրալիր կերպով թոյլատրել էր օգտվել ներկայացման համար իր պարտէզից և պալատից։

Ամեն միջոց գործադրված էր, որ պարտէզում տղամարդու ոչ մի հետք կամ նշան անգամ չը լինի։

Երբ ժողոված պարսկուհիները զգացին իրանց ապահով, դէն ձգեցին իրանց վրայից սաւանները (чадры) և ցանցապատ երեսկալները։ Այդ ժամանակ միայն կարելի եղաւ զանազանել ջահէլին՝ պառաւից, գեղեցկուհուն՝ տգեղ ու անճոռնուց, իշխանուհուն՝ աղախնից։ Ցաւելով պէտք է յիշատակել, որ պարսկուհին, ցանկանալով եւրոպականանալ, փչացնում է արդէն իր ազատ մարմինը կօրսէտով։

Թատրօնի դահլիճում լցված 500-ից աւելի կանայք առանձնակի լռութեամբ և հանդիսաւորութեամբ սպասում էին վարագոյրի բարձրանալուն։

Այս ցերեկոյթի առաջին մասը կազմում էր երկու դասախօսութիւն. առաջինի բնաբանն էր «Թատրօնն ու նրա բարոյական նշանակութիւնը», իսկ երկրորդինը՝ «Պարսկուհին անցեալում, ներկայում և ապագայում»։

Վերջին դասախօսութեան մէջ երիտասարդ պարսկուհին արդարացի կերպով բողոքում էր 400 տարի առաջ իշխող Սաֆավի հարստութեան շահերից մէկի կամքով կանանց համար բռնի կերպով մտցված չադրի գործածութեան դէմ։ Խանդոտ շահը, ցանկանալով իր կանանց գեղեցկութիւնն անհամեստ հայեացքներից թաքնված պահել, հրամայեց նրանց ծածկոցների տակ շրջել։ Բայց որպէսզի իր հպատակների ծաղրի առարկայ չը դառնայ, նա այդ տեսակ հրաման արձակեց Իրանի բոլոր կանանց համար, իսկ քծնող խալիֆաները շտապեցին հաստատել այդ՝ այլ և այլ մեկնաբանութիւններով Ղուրանից։ Այդպիսով՝ կրօնով սրբագործված այդ սովորութիւնը արագօրէն տարածվեց ամբողջ մահմեդական աշխարհում։

Ցերեկոյթի երկրորդ բաժանմունքում կարդացվեցին գրական հատուածներ պատմական զգեստներով և արևելեան երաժշտութեան ներդաշնակութեամբ երգվեցին մի քանի արևելեան երգեր խմբով և սօլօ ու դրվեցին մի քանի կենդանի պատկերներ Սումբատով-Իւժինի «Դաւաճանութիւն» պիէսից, իսկ այդ պատկերների բացատրութիւնը շատ ուժեղ տպաւորութիւն թողեց հանդիսական կանանց վրա։

Երրորդ բաժնում ուզում էին ներկայացնել մի գործողութեամբ կօմէդիա, սակայն ցաւելով պէտք է ասել, որ նոյնիսկ ամենահամարձակ պարսկուհիներին անհնար եղաւ համոզել, որ մասնակցեն խաղին։ Այդ պատճառով ստիպված էին բաւականանալ սինեմատօգրաֆով։

Նոյնիսկ այդ տեսակ ներկայացումը մի այնպիսի խոշոր երևոյթ էր դժբաղդ պարսկուհիների համար, որ նրանք ցերեկոյթի վերջանալուց յետոյ երկար ժամանակ չէին հեռանում դահլիճից և միմեանց էին հաղորդում իրանց ստացած տպաւորութիւնները։

Քաջալերված հոգևորականութեան ընդդիմութեան բացակայութիւնից և հասարակութեան ու պարսկական մամուլի համակրանքից, Կանանց Բարեգ. Ընկերութիւնը վճռել է պարբերաբար կազմակերպել այդ տեսակ ցերեկոյթներ։ Ա. Ն.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Էմիլ Բերտրան, «Նուպար փաշա», 1825—1899, թարգմանեց Մեսրոպ Նուպարեան, փոքրադիր, 86 երես, Կ. Պօլիս, 1910, գինն է 5 ղրուշ։

Եգիպտոսի նշանաւոր պետական գործող հայազգի Նուպար փաշայի անձնաւորութիւնը անջնջելի անուն է թողել Եգիպտոսի պատմութեան մէջ։

Անցողական և բարեկարգչական այն շրջանում, երբ Եգիպտոսը գտնվում էր բացառիկ հանգամանքներում, ճակատագրական հոսանքների ազդեցութեան տակ և յաճախ ճգնաժամային ալեկոծութեան մէջ, Նուպար փաշայի նման խոշոր և ձեռնհաս պետական գործողի ներկայութիւնը մի գիւտ էր, մի բաղդ էր վերածնվող երկրի համար։

Նուպար փաշայի կենսագրութեան հեղինակ Էմիլ Բերտրանը տալիս է հետաքրքրական տեղեկութիւններ հանգուցեալ գործողի խոշոր անձնաւորութեան մասին։ Թարգմանիչ Մ. Նուպարեան իր կողմից լրացրել է այդ տեղեկութիւնները յաւելուածական ծանօթութիւններով և յառաջաբանով։

Երախտագէտ Եգիպտոսը ի պատիւ իր նշանաւոր գործողի կանգնեցրեց արձան 1904 թւի յունիսի 3-ին Աղեքսանդրիայում, որը բացվեց մեծ հանդիսաւորութեամբ։

Գրքոյկի մէջ զետեղված են Նուպար փաշայի և Պօղոս Նուպար փաշայի պատկերները։ Ա. Ք.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երզնկա, 21 մայիս

Նպատակ ունենալով մեր վարժարանի դասագրքերուն շարքը բարեփոխել և լաւագոյններն ընդունիլ, կը խնդրենք թիւրքահայ և ռուսահայ յարգելի հեղինակներէն, որ բարեհաճին մեզի ղրկել, մինչև յունիս 20, իրենց հեղինակութիւններէն մէկ-մէկ օրինակ, գլխաւորաբար հայերէն ընթերցանութեան, պատմութեան, աշխարհագրութեան, բնական գիտութեանց և թուրքերէնի վերաբերեալ։

Երզնկայի Կեդր. վարժար. տեսչութիւն

Թիֆլիս, 27 մայիսի

«Մշակի» այս տարվայ № 99-ի մէջ զետեղված իմ «Վանի գերմանական որբանոցը» յօդուածի առիթով գործին գուցէ աւելի տեղեակ անձանց կողմից լսել եմ, որ վանեցի մի երիտասարդի մասին այդտեղ իմ յիշած տեղեկութիւնները կարօտ են ստուգութեան և արդիւնք՝ որոշ թիւրիմացութիւնների։ Այս պատճառով ես կամենում եմ այս երկտողովս ետ վերցնել իմ այնտեղ գրածները և միևնոյն ժամանակ յիշել, որ իմ նպատակս երբէք չէ եղել վիրաւորել այս կամ այն անձին, այլ միայն ցոյց տալ այն ահագին տարբերութիւնը հայերի և եւրոպացիների բնաւորութիւնների, որը շատ անգամ պատճառ է դառնում խոշոր անհամաձայնութիւնների։

Մ. Դերձակեան

Թիֆլիս, 29 մայիսի

Մի քանի ընթերցասէր, չքաւոր հայ պատանի-երիտասարդներ, կամենալով օգտվել Պուշկինեան քաղ. ձրի գրադարանից, խորին ցաւ ու ափսոսանքով լսեցին նոյն գր.-ընթերցարանի գրադարանապետուհուց, որ գրադարանը առհասարակ միանգամայն զուրկ է որևէ հայերէն հեղինակութիւնից։

Արդ՝ ներկայ երկտողովս, մի խումբ երիտասարդների կողմից, պարտք եմ համարում քաղ. վարչութեան բարեհաճ ուշադրութիւնը դարձնել այդ պակասը եթէ ոչ ամբողջապէս, գէթ մասամբ լրացնելու, մի պակաս՝ որ անխուսափելիօրէն զգացվում է Թիֆլիսի նման մի հայաշատ քաղաքում՝ մտաւոր ու հոգեկան անզուսպ պահանջ զգացող չքաւոր հայ պատանեկութեան մէջ։

Յովհ. Բռնակոթեան

Թիֆլիս, 1 յունիսի

«Մշակի» № 116-ում կարդացի, որ Մեծ-Ղարաքիլիսայի հայոց ուսումնարանների հոգաբարձական և ուսուցչ. կազմը միացել է Պարոյր Ղարիբեանի նամակին՝ ինձ մեղադրող կէտերի հետ և հրաւիրում է ինձ միջնորդ դատարանի, սակայն առանց մի խօսք ասելու, թէ ինչո՞ւ պարոնները խուսափել են պետական դատարանից։ Ես ուրախութեամբ ընդունում եմ պարոնների առաջարկած միջնորդ դատարանը միայն հետևեալ պայմաններով։

1) Դատը պիտի լինի Թիֆլիսում, որտեղ միջնորդ դատարանի գաղափարը և նրբութիւնները հասկացող աւելի ձեռնհաս մարդիկ կան, քան Ղարաքիլիսայում։

2) Ինձ դատի հրաւիրող պարոնները պէտք է շտապեն փոխել իրանց ընտրած երկու դատաւորներին այն յարգելի պատճառով, որ դատաւորներից Յ. Խանզադեանը ինձ դատի հրաւիրող Մ. Խանզադեանի հարազատ եղբայրն է և ուսուցիչ Խ.-ք. Խանզադեանի որդին։ Վերջինս թէպէտ չէ ստորագրել, բայց նա նոյնքան շահագրգռված է, որքան միւսները, քանի որ անօնիմ նամակում պակաս վիրաւորանք հասցրված չէ և սրան։ Իսկ միւս դատաւոր Տէր-Պետրոսեանը բացի որ Խանզադեանների մօտիկ ազգականն է՝ այլ և երկու աչքով կոյր է, մի հանգամանք, որ անկարելի է դարձնում համաձայնվել կոյր դատաւորի ընտրութեան հետ, այն էլ այնպիսի դէպքի համար, որտեղ դատաւորները պէտք է գործ ունենան անօնիմ նամակի հետ։ Չէ՞ որ բացի վկաների և էքսպերտների ցուցմունքից դատաւորները իրանք էլ պէտք է աչք ունենան, որ համեմատեն իմ ձեռքն անօնիմ նամակի հետ և ըստ այնմ դատեն ու հանգիստ խղճով որոշում կայացնեն։

3) Դատաւորների կայացրած որոշումը պէտք է հրատարակել Թիֆլիսի հայ թերթերում։ Դատը լինելու է վերջնական և պարտաւորեցուցիչ կողմերիս համար։

Ես իմ կողմից ընտրել եմ դատաւորներ Լևոն Մելիք-Օհանջեանին և Պօղ. Օհանջեանին և ձեզ տալիս եմ պատասխանս տպված օրից 6 օր ժամանակ՝ ընտրելու ձեր նոր դատաւորներին, որոնք անպայման պէտք է չէզոք անձնաւորութիւններ լինեն։

Եթէ դուք այս պայմաններով միջնորդ դատարան կազմելուն դէմ էք, այդ դէպքում ինձ մնում է դիմել պետական դատարանին։

Ա. Սինանեան

ՄԻ ԲԱՆԱԿՌՒԻ ԱՌԻԹՈՎ

III

Վերջերս իմ դէմ գրեցին՝ 1) կղերական «Լոյս» շաբաթաթերթը, 2) Իգգոյ «Нов. Рѣчь» թերթում, 3) Գր. Երզնկեան «Հորիզոնի» № 100-ում և 4) Յ. Տէր-Վարդանեան «Մշակի» № 107-ում. ես նրանց կը պատասխանեմ շատ հակիրճ կերպով.

1) Կղերական «Լոյսին».—«Լոյսը» գովում է Լէօին, որ նա վերջերս անցել է պահպանողականների բանակը. «Երբ Լէօն յախուռն կերպով մերժում էր մեր եկեղեցու դերը մեր ազգայնութեան խնդրում, նա ծանօթ չէր մեր անցեալին, մեր պատմութեանը. իսկ երբ սկսեց աւելի լրջօրէն վերաբերվել խնդրին, երբ ուսումնասիրեց հայի անցեալն և ներկան, նա հասաւ բոլորովին հակառակ եզրակացութեան. հէնց բոլոր գաղտնիքը դրա մէջ է, որ Պիչիկեաններին չէ հետաքրքրում եկեղեցու անցեալը, նրա կապը հայ ժողովրդի հետ» (№ 20)։ Ես արդէն իմ յօդուածումս գրել էի, որ բոլոր պահպանողական րէակցիօն թերթերը և կուսակցութիւնները յենվում են անցեալի վրա. նրանք գիտեն միայն «16 դարեր» և ուրիշ ոչինչ. նրանց միակ ցանկութիւնն է յաւիտենականացնել անցեալը, հինը, փտածը, պաշտելով անցեալի իդէալները. նրանք թշնամի են ամեն մի նոր մտքի, հոսանքի. էվօլիւցիօնիզմը, մշտական առաջադիմութիւն գոյութիւն չունի այդ մարդկանց համար. «մեր պապերը այդպէս էին, մենք էլ այդպէս պիտի լինենք»՝ ահա նրանց փիլիսոփայութիւնը. բայց նրանք մոռանում են, որ այդ փիլիսոփայութիւնը մահ է կեանքի համար. կեանքը միշտ փոխվում է, միշտ հոսում. հինը մեռնում է, նորը առաջ գալիս. շատ հիմնարկութիւններ անցեալում օգտաւէտ էին, այժմ վնասակար, անպէտք. միապետութիւնը Անգլիայում, Ֆրանսիայում դրական երևոյթ էր, երբ կռւում էր ֆէօդալիզմի դէմ։ Ստրկութիւնը իր ժամանակին դրական երևոյթ էր, կապիտալիզմը՝ նոյնպէս և այլն։ Բայց մի՞թէ կարելի է ասել, որ ստրկութիւնը հիմա էլ անհրաժեշտ և օգտաւէտ բան է։ Մենք մեր իդէալները անցեալից չենք քաղում, մենք անցեալի հետ կռւում ենք։ Ես միայն մի բանի եմ զարմանում. ինչո՞ւ այդ կղերական թերթի անունը «Լոյս» է. աւելի յարմար չէր լինի նրան անուանել «Խաւար»։

2) Իգգօյին.—Իգգօյը «Нов. Рѣчь» թերթում համաձայն չէ իմ մտքի հետ, թէ մեր նացիօնալ լիբերալները և կղերականները դրականապէս են վերաբերվում դէպի Էջմիածինը. Լէօն նոյնպէս բարձր է գնահատում եկեղեցին, ինչպէս և Սպանդարեանը. նրանք զանազանվում են չնչին կէտերում. ես մի ուրիշ տեղ կը պարզեմ այդ իմ միտքը։

3) Գրիգորիս Երզնկեանին.—Երզնկեանը դիմել է ինձ բաց նամակով (տես «Հորիզոն» № 100). նա գրում է ինձ. «Դուք պէտք է լաւ իմանաք, որ այժմ մեր ներկայ հոգևոր դասակարգը ձեր կարծեցած «մօլլայական», խամ՝ բոլորովին տգէտ դասակարգը չէ. այժմ նրա մեծամասնութիւնը ընտիր հոգևոր անդամներից է կազմված, որոնք մտաւոր պաշարով են զինված և պատրաստված»։ Այս կարծիքը այնքան տարօրինակ է, որ երևի և «Հովիւը» կը գտնի նրան սխալ. լսենք ինչ կարծիք ունէր Գր. Արծրունին այդ դասակարգի մասին։ «Բնութեան համեմատ ընտանեկան կեանքից հեռու, ժողովրդական փողերը վատնող, խռովութիւն գցող, ինտրիգաներ վարող, փառքի պատուանշաններին հետևող, անգործ, անշարժ, տգէտ, մոլեռանդ, ժամանակակից գիտութիւնից և ճշմարտութիւնից յետ մնացող, ժողովրդական կրթութիւնը խօսքով քարոզող, բայց գործով նրա զարգացմանը արգելող, ամեն նորութեան և լուսաւորութեան ընդդիմադրող մարդիկ... սրանք են ժողովրդական հոգևորականների մեծ մասը»։ Արծրունին, ինչ-

պէս տեսնում էք, աւելի վատ բաներ էր գրում, քան ես. և փակպէս, ծուր են ընտիր, զարգացած քահանաներ, որոնց մասին խօսում է Երզնկեանը: Ես ծանօթ եմ Ախալքալաքի գաւառի քահանաների հետ և հաստատապէս գիտեմ, որ մեծամասնութիւնը բոլորովին անկիրթ և մինչև անգամ կասկածաւոր մարդիկ են: Որ մկկիտանչին, զուրնաչին, տիրացուն կաշառքի փող կը պատրաստէ, նա դառնում է տէրտէր: Մի քանի ամիս առաջ ես Ախալքալաքում տեսայ մի նոր քահանայ, հարցրի՝ ինչ մարդ է: Ինձ ասացին, որ նա առաջ սուաղչի (պատ շարող և ներկող) էր. զուրնաչին, մկկիտանչին, սուաղչին դառնում են քահանայ, և էլի մեզ ասում են, որ մենք ունենք ընտիր պաշարով զինված հոգևորականութիւն. Թիֆլիսում, ճիշդ է, քահանաները աւելի կրթված են, բայց բարոյական տեսակէտից նրանք աւելի վատ են, քան գիւղական տէրտէրները: Թող Երզնկեանը իրան չը խաբէ. փաստը՝ փաստ է. մենք ոչ մի հիմք չունենք սխալ համարելու Գր. Արծրունու կարծիքը. մեր քահանաները շատ էլ չեն տարբերվում Թուրք մոլլաներից:

Իր բաց նամակը Երզնկեանը վերջացնում է հետևեալ խօսքերով: «Ափսոս որ այժմ այդ պատուական եկեղեցու արած և անելիք հրաշալի ծառայութիւնը ժխտող կօսմօպօլիտներ կան մեր մէջ»: Նոյն միտքը յայտնում է և Լէօն: «Ծայրայեղ դաւանութիւններ,—գրում է նա,—չեմ ունեցել, մանաւանդ այնպիսինները, որոնք ժխտում են ազգութիւնը»: Եթէ հաւատանք Լէօին և Երզնկեանին, մեր մէջ կան «կօսմօպօլիտներ», ազգութիւն ժխտող: Ովքե՞ր են դրանք: Եւ ի՞նչ է նշանակում «ազգը ժխտել»: Իմ կարծիքով, դրանք դատարկ խօսքեր են, դատարկ մեղադրանք: Բայց ես վաղուց եմ հասկացել այդ մեղադրանքների սօցիալական իմաստը: Հասարակութիւնը կազմված է զանազան մասերից, դասակարգերից, որոնցից ամեն մէկը աշխատում է ձեռք բերել՝ ինչքան կարելի է՝ շատ նիւթական միջոցներ, ազդեցութիւն, ոյժ: Ամեն մի դասակարգ ունի իր դասակարգային շահերը և իդէալները: Բայց ամեն մի դասակարգ համոզված է, որ իր շահերը՝ ազգային-ժողովրդական շահեր են, և ով որ նրան է վնասում, վնասում է ամբողջ ազգութեանը: Պատմութիւնը և ներկան լիքն են այդպիսի դէպքերով: Երբ Ռուսաստանում վերացվում էր ճորտութիւնը, ճորտատէրերը աղաղակում էին. «Ազգը կործանվում է». Երբ Ֆրանսիայում Գամբետտա, Կլեմանսօ, Ժօրէս ուժեղ հարուածներ են տալիս եկեղեցուն, կղերականները նոյնպէս աղաղակում են՝ «Ազգը կործանվում է»: Երբ մի երկրում մտնում է սահմանադրութիւն, բիւրօկրատիան նոյն երգն է երգում՝ «Ազգը կործանվում է»: Երբ Գր. Արծրունին մերկացնում էր մեր հոգևորականների տգիտութիւնը և արարքները, կղերականները գոռում էին. «Նա ազգի թշնամի է, ազգը կը կործանվի»: Մենք սովոր ենք այդ հին երգին, այդ անմիտ մեղադրանքին: Մենք շատ լաւ գիտենք, որ վնասելով հին, միջնադարեան հիմնարկութիւններին և անպէտք պարազիտ խմբակցութիւններին, մենք ոչ միայն չենք վնասում աշխատաւոր ազգին, այլ օգուտ բերում: Մի փոքրիկ օրինակ գիւղական կեանքից: Այժմեան գիւղացին իր կոպէկները տալիս է մատաղի, ժամի, քելեխի և չէ տալիս գրքի, լրագրի: Մենք ցանկանում ենք, որ չը տայ մատաղի, քելեխի, այլ գրքի: Այդ բանը օգո՞ւտ կը լինի գիւղացուն թէ՞ վնաս: Գիւղացուն կը լինի օգուտ: Կը վնասվեն քէլէխ ուտողները, տիրացուները, առհասարակ պարազիտները, բայց չէ՞ որ մենք այդ ենք ուզում. մենք ոչ թէ ազգի թշնամի ենք, այլ պարազիտների: Մենք ազգը չենք ժխտում, ժխտում ենք պարազիտիզմը, ազգի այժմեան անմխիթար դրութիւնը:

Երզնկեանի բաց նամակի մէջ միայն մի միտք ինձ շատ դուր եկաւ. «Թէ հոգևոր պետը, թէ ամբողջ հոգևորականութիւնը ի պաշտօնէ իբրև խիստ աւանդապահ են հանդիսանալու այն տրադիցիաների, որոնք ընդհանուր ազգային ժողովների ծնունդ են համարվում»: Ես շատ ուրախ եմ, որ մի քահանայ պարզ, որոշ կերպով պաշտպանեց հին աւանդութիւնները և տրադիցիաները: Ես աւելի ուրախ կը լինէի, եթէ նա բացարձակ կռիւ սկսէր գիտութեան և այժմեան կուլտուրայի դէմ: Եթէ նա հետևողական է, նա պիտի այդ անէ: Չէ՞ որ այժմեան գիտութիւնը չէ հաշտվում միջնադարեան աւանդութիւնների հետ, որոնք այնքան սիրելի են Երզնկեանին: Չէ կարելի ծառայել երկու իրար հակասող, իրար թշնամի ոյժերի: Կարելի է ընդունել կամ հին տրադիցիաներ, կամ գիտութիւն. և ով որ մինը յարգում է, նա չէ կարող յարգել և միւսը: Ես անկեղծ ցանկանում եմ, որ մեր կղերականները սկսեն բացարձակ կռիւ գիտութեան դէմ, ինչպէս այդ անում է պապականութիւնը: Եւ սկսեցէք, մենք սպասում ենք:

4) **Տէր-Վարդանեանին.** — Շատ տարօրինակ տպաւորութիւն թողեց ինձ վրա Յ. Տէր-Վարդանեանի յօդուածը: Այդ՝ իր խօսքով՝ «ոչ-կղերականը և ոչ-ազգայնականը» մեզ հաւատացնում է, որ Կաուտսկի, Դաւիթ, Բէրնշտէյն վերաբերվում են դրական կերպով դէպի լուսաւորչական եկեղեցին, որ նրանք ոչ միայն համաձայն չեն պասսիվ բօյկօտի տակտիկայի հետ, այլ և խորհուրդ են տալիս պաշտպանել այս կամ այն կաթողիկոսի կանդիդատուրան. Թող ների մեզ Տէր-Վարդանեանը, նա երևի լաւ չէ հասկացել իր կարդացածը. Կաուտսկիի աշխարհահայեացքը մեզ շատ լաւ է ծանօթ և մենք վճռապէս ասում ենք, որ նա չէր կարող խորհուրդ տալ մի որևէ եպիսկոպոսի կանդիդատուրան զնել, և առհասարակ Կաուտսկին չէ կարող այնպէս վերաբերվել դէպի լուսաւորչական եկեղեցին, ինչպէս վերաբերվում են Լէօն և Սպանդարեանը: Ի՞նչ կասէիք, եթէ մի մարդ վեր կենար և գրէր, թէ ինքը անձամբ կարդացել է Լ. Տօլստոյի նամակը, որի մէջ փառաբանվում է մահվան պատիժը. մենք կասէինք, որ այդպիսի բան Տօլստոյ գրել չէր կարող: Նոյնն էլ ասում ենք Կաուտսկիի մասին: Տէր-Վարդանեանը չէ հասկացել իր կարդացածը, մանաւանդ Կաուտսկիի արգումենտացիան. շատ ցանկալի է, որ յիշված նամակները ամբողջովին տպվեն այստեղի թերթերում. այն ժամանակ մենք կը յայտնենք մեր կարծիքը. Տէր-Վարդանեանը իրանից էլ դատողութիւններ է անում, որոնք նոյնպէս տարօրինակ և սխալ են: Ես գրել էի, որ դեռ շարունակվում է անհուն, դարաւոր կռիւը գիտութեան և կոյր հաւատի միջև: Տէր-Վարդանեանը այդ խօսքերի դէմ գրում է. «Սրանք, պ. Պիչիկեան, ձեր խօսքերն են և սրանք միայն և միայն ֆրազներ են, որոնցով դուք հայ ինտելիգենցիայի վրա հազիւ թէ ազդէք»: Տէր Վարդանեանը այնքան միամիտ է, որ այս տողերից յետոյ իրան անուանում է ոչ կղերական, ոչ եկեղեցական. Տէր-Վարդանեանի համար կռիւը գիտութեան և հաւատի մէջ՝ ֆրազներ են, իմ երևակայութեան արդիւնք. ինչ ասեմ այդպիսի մարդուն. խորհուրդ տամ, որ նա կարդայ պատմական և փիլիսոփայական գրքեր, լրագիրներ և գիտնական ժողովածուներ: Ես կարող էի հարիւրաւոր օրինակներով և փաստերով լուսաբանել իմ միտքս, բայց դա անյարմար է լրագրում. բայց կարելի է Տէր-Վարդանեանը կարծում է, որ հայերի մէջ չը կայ կոյր վնասակար հաւատ, որ մեր ժողովրդի հաւատը յենվում է գիտնական հիմքերի վրա, որ մեր հասարակութիւնը և հոգևորականութիւնը՝ էվօլիւցիօնիստական և պօզիտիվիստական աշխարհահայեացք ունեն:

Տէր-Վարդանեանի համար այդ հակասութիւնը՝ ֆրազներ են: Նրա համար ֆրազներ չեն կաթողիկոսի «անթիւ ադմինիստրատիվ իրաւունքները». չէ՞ որ եկեղեցու հետ կապված են ամուսնական, դպրոցական և այլ հարցեր, հետևապէս մենք պէտք է դրականապէս վերաբերվենք դէպի Էջմիածինը: Ամուսնական հարցը, մասնաւորապէս ապահարզանը արդէն անցնում է նահանգական դատարանների իրաւասութեանը. օրինագիծը պատրաստ է և շուտով կը հաստատվի. պսակը և ապահարզանը պիտի նոտարի և դատարանների միջոցով կատարվեն. ցանկացողները կարող են եկեղեցական ծէսը կատարել. բայց դա այլ ևս պարտադիր չի լինի: Մեր ուսումնարանները կապված են եկեղեցու հետ, բայց այդ կապը նոյնպէս մշտական չէ. մեր առաջ կեանքը դրել է շատ ծանր դիլեմմա. մենք պէտք է ընտրենք կամ բիւրօկրատական, մինիստրական, կամ եկեղեցական ուսումնարան. և մենք ընտրեցինք վերջինը, որովհետև վերջիններում կայ աւելի ազատութիւն. բայց դա վերջնական վճիռ չէ. երբ վաղը մտցվի Կովկաս իսկական լայն իրաւունքներով օժտված տեղական ինքնավարութիւն և բացվեն զեմստվային ուսումնարաններ, մենք կասենք մնաս բարև եկեղեցական ուսումնարաններին և մեր որդիները կուղարկենք նոր ուսումնարանները: Վերջինները կունենան նոյն ազատութիւնը, այնտեղ մայրենի լեզուով կը լինի դասաւանդութիւնը և նրանք կունենան միջոցներ, որոնցից զուրկ են այժմեան դպրոցները: Այժմ ունենք ազատութիւն և չունենք փող. զեմստվային դպրոցներում մենք կունենանք և ազատութիւն, և փող: Ներկայումս մենք ստիպված ենք գործել ծխական դպրոցների համար. բայց մենք ոչ մի րոպէ չենք մոռանում «համաշխարհային, մեծ, անհուն կռիւը կոյր մասսայական հաւատի դէմ». մենք գիտենք, որ չէ կարող առաջադէմ և երջանիկ լինել մի ժողովուրդ, որը խրված է տգիտութեան, մոլեռանդութեան և սնահաւատութեան մէջ. բայց ամենազարմանալին այն է, որ մեզ խորհուրդ են տալիս հաշտվել տգիտութեան և կոյր հաւատի հետ յանուն ազգային... կուլտուրայի. այդ տարօրինակ խորհուրդ տուողը Տէր-Վարդանեանն է. ես նրան ասում եմ, ինչ որ ասացի Երզնկեանին. չէ կարելի ծառայել երկու տիրոջ. եթէ մէկին սիրում ես, միւսին պիտի ատես:

Ի. Պիչիկեան

ՌՈՃԻ՞Կ ԹԷ՞ ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒԹԻՒՆ

—

XX դարում տակաւին վիճաբանութեան առարկայ է դառնում մեզանում այն հարցը, թէ քահանան ռոճիկո՞վ պէտք է ապրէ թէ՞ մուրացկանութեամբ: Ծանր և ճնշող տպաւորութիւն է թողնում Բագւում այդ հարցի առիթով տեղի ունեցող ժողովների («Մշակ» №№ 104, 108 և 116) արձանագրութիւնը: «Սիմօն ապերները» գլուխ են բարձրացրել և «յիմարութիւն» անուանում ռոճիկի սիստեմը: Դա զարմանալի չէ. «Սիմօն ապերներ» եղել են մեզանում միշտ և կը լինեն: Զարմանալի է, որ այդ հարցի իրագործման դէմ է տեղական հոգևորականութիւնը: Պատճառը: Ռոճիկի սիստեմը հակասում է «եկեղեցու նուիրական աւանդութեան»: Ո՞ւր է, թէ այդ առարկութիւնը հիմնաւոր և անկեղծ լինէր: Բագւի քահանաներից մէկը 1895 թէ 1896 թւին, լաւ չեմ յիշում, Մ. գիւղում պարծանքով էր յիշում մի փոքր շրջանում, որ Բագւում մի քանի ծխականներ ունի, որոնցից տնօրհնէքին միշտ ստանում է 100-ական ր.: Դէ, արի և համաձայնիր 3000 ր. ռոճիկով քահանայագործել, քանի որ «նուիրական» մուրացկանութեամբ կրկնակին և եռակին են հաւաքում և հազարներ դիզում: Բայց, որպէս ինտելիգենտ և դիրք ունեցող քահանայ, նա չէ կարող հաշւի չառնել ժամանակի պահանջը և հասարակական հասունացած ողջամիտ կարծիքը. պէտք է, ինչ գնով էլ լինի, արդարացնել ռոճիկի սիստեմը ժխտելու պատճառը և... և «Սիմօն ապերների» բարեպաշտ զգացմունքները շոյելու և հարցը տապալելու համար արդէն պատրաստ է փրկարար միջոցը—«Նուիրական աւանդութիւնը»—պահպանողականների միակ, բայց և մաշված զէնքը:

Հակասութիւնների դարում ենք ապրում: Հայ եկեղեցիներ, Աստուծոյ տաճար քաղաքական միտինգների և թատերասրահների վայր դարձնելը երևի չէ հակասում եկեղեցու «նուիրական աւանդութեան»: Բայց մուրացկանութիւնը, քահանայի վարկը և մարդկային արժանապատուութիւնը ստորացնող մուրացկանութիւնը վերացնելը, ծ, յանցանք է, մահացու մեղք է, «նուիրական աւանդութեան» հակառակ է:

Հարցը այնքան պարզ է, հասունացած և ժամանակակից, որ ռոճիկ տալու սիստեմի կարևորութեան մասին խօսելը միանգամայն աւելորդ է:

1902 թւին, Վլադիկավկազում, մի մասնաւոր խօսակցութեան ժամանակ, հարցրի հանգուցեալ Արիստակէս արքեպիսկոպոսին թէ՝ արդեօք հնարաւոր չէ՞ քահանաներին ռոճիկ տալու սիստեմ մտցնել Աստրախանի թեմում, մանաւանդ որ թեմի ժողովուրդը բացառապէս քաղաքաբնակ է և, հետևաբար, որպէս կուլտուրապէս համեմատաբար զարգացած ժողովուրդ, հեշտ կըմբռնէ ռոճիկ տալու առաւելութիւնը և հարցը դրականապէս կը լուծէ գոնէ գլխաւոր կենտրոններում: Հանգուցեալը սրտի թախիծով յիշեց, որ մի քանի ժամանակ առաջ, իր իսկ նախագահութեամբ, ժողով է գումարել Աստրախանում այդ հարցի առիթով և, չը նայելով իր բազմապիսի համոզումներին և ճիգերին, ընդհանուր ժողովը ձայների մեծամասնութեամբ տապալել է այդ հարցը: «Հայ ժողովուրդը իր բացարձակ մեծամասնութեամբ առ այժմ ընդունակ չէ ըմբռնելու այդ հարցի կարևորութիւնը և ժամանակակից լինելը»—մօտաւորապէս այս խօսքերով վերջ տուեց իմ հարցին հանգուցեալ Սեդրակեանը:

Այդ փորձ արվել է 10 տարիներ սրանից առաջ: Շատ բան է փոխվել այդ օրից, շատ չար ու բարի է անցել մեր գլխով: Եւ ահա Բագւի ծխական ժողովը գալիս է հաստատելու, որ հայ ժողովրդի ինքնագիտակցութիւնը արթնանալու նշաններ է ցոյց տալիս. այդ հարցը լուծելու ձեռներէցութիւնը այժմ ժողովուրդը ինքն է իր վրա վերցնում, և, իմ խորին համոզմունքով ու համեստ կարծիքով, այդ հարցը դրականապէս լուծել կարող է միմիայն հայ ժողովուրդը յանձին իր գիտակից մասի:

Իսկ հայ հոգևորականութիւնը (ի հարկէ, խօսքս քահանաների մասին է), աննշան բացառութեամբ, դէպի ռոճիկի հարցը թշնամաբար կը վերաբերվի և խուլ, գաղտագողի պայքար կը մղէ: Ինչու: Որովհետև իդէալականութիւնից շատ հեռու ենք և ընդունակ չենք նիւթականը զոհել բարոյականին: Որովհետև ընդունակ չենք ըմբռնելու, որ քահանաներիս վարկի անկման գլխաւոր պատճառներից մէկը մուրացկանութեամբ վարձատրվելն է: Վերջապէս, որովհետև պատւի զգացումը և բարոյական քաջութիւնը այնքան փոքր ու աննշան է մեզանում, որ մեզ անընդունակ է դարձնում մուրացկանութեամբ ձեռք բերվող 3—4—5 և աւելի հազարները փոխարինել $1^{1}/_{2}$—2—3 հազար րուբլի պատուաւոր ռոճիկի:

Կատարեալ աջողութիւն եմ մաղթում Բագւի ծխականներին՝ օր առաջ իրականացնելու քահանաներին ռոճիկ տալու հարցը, որը և օրինակ կը դառնայ միւս քաղաքներին:

Ներսէս ք. Վարդանեանց

Գէօրգիևսկ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

—

Անգլիական «Manchester Guardian» լրագրի Փոքր-Ասիայի թղթակիցը, յայտնի արևելագէտ սըր Վիլիամ Րամզէյ, ցոյց է տալիս երիտասարդ-թիւրքերի դժուարին կացութիւնը:

«Երիտասարդ-թիւրքերի առաջ դրված գործը,—ասում է նա,—այն է՝ երկրի ներքին կառավարութեան բարւոքումը շատ ծանր է, առանց նոյն իսկ արտաքին բնաւորութիւն ունեցող բարդութիւնների, ինչպէս կրետական հարցը: Գործերի դրութիւնը համառօտակի կարելի է բնորոշել հետևեալ կերպով. տիրապետող ազգութիւնը՝ թիւրքերը ստիպված են ընտրել կամ կրճատել իրանց առանձնաշնորհեալ դրութիւնը իբրև զինւորական արիստոկրատիա կամ հաւասարութիւն ընդունել կայսրութեան կազմի մէջ մտնող միւս ազգութիւնների հետ, այն է՝ քրիստոնեաների հետ, մի բան, որից ամենից շատ վրդովվում է թիւրքերի մեծամասնութիւնը: Վամբերին կարծում է, որ օսմանեան կայսրութեան մէջ բուն թիւրքեր 6,000,000-ից աւելի չեն: Եւ սակայն այդ 6 միլիօնը պէտք է պահէ իր տիրապետութիւնը 14,000,000 արաբների (մտցնելով դրանց մէջ և քրիստոնեայ սիրիացիները), 4,000,000 յոյների և 2,000,000 հայերի վրա, չը խօսելով դեռ ալբանացիների, օլգարների, քիւրդերի և այլ մանր ազգութիւնների մասին:

«Թիւրքերը միացնող ցեղ են,—ասում է սըր Րամզէյ,—և ես արդէն գրել եմ այդ մասին մանրամասնօրէն իմ աշխատութեանս մէջ Թիւրքիայի մասին (Sapressions of Turkey). Նրանք հետզհետէ նահանջում են աւելի պտղաւէտ ցեղերի առաջ: Բայց նրանց իսկական քանակութիւնը պահպանվում է միւսլիման այլ ազգութիւնների ասսիմիլիացիայով (ի մի ձուլմամբ): Այնուամենայնիւ թիւրքերը մեռնում են, մանաւանդ սիֆիլիսի հետևանքով, որ աւերումներ է կատարում շատ գաւառներում և տարածվում է զինուորների ձեռքով ամբողջ երկրում:

«Անկասկած է,—նկատում է իր եզրակացութեան մէջ սըր Րամզէյ,—որ 6 միլիօն թիւրքերը չեն կարող պահել միշտ տիրապետութիւնը քանակութեամբ իրանցից գերակշիռ օտար ցեղերի ազգայնականութեան վրա և ոչ մի նոր «դաշնութիւն» նրանց չի օգնի այդ կողմից: Ուստի հարցի միակ լուծումն է կամ ճանաչել թիւրքաց կայսրութեան բոլոր քաղաքացիների համար հաւասար իրաւունք, կամ թիւրքիայի անկումը: Ենթադրել թէ կարող է թիւրքերի մէջ երևալ նոր հանճար Նապօլէօնի նման, որը միացնէր իր մէջ զինւորական և վարչական տաղանդներ, դա քիչ հաւանական է, բայց եթէ նոյնիսկ այդպիսի հանճար երևայ, նա կը տեսնի, որ միակ ելքը՝ թիւրքիայի բոլոր ազգութիւնների իրաւահաւասարութիւնն է: Երիտասարդ-թիւրքերն էլ քիչ-քիչ սկսում են համակվել այդ մտքով, բայց իրաւահաւասարութեան հետ միասին նրանք մտածում են, թէ հնարաւոր է միւս ազգութիւնների օսմանցիացումը: Դրա մէջ է նրանց սխալը, որովհետև դա միևնոյն տիրապետութեան միտքն է, միայն թոյլ կերպով, գունաւորված ուրիշ գոյնով: Ոչ մի առաջադիմութեամբ դուք յոյնին չէք կարող թիւրք դարձնել: Ոչ արաբները, ոչ ալբանացիները չեն փոխի իրանց ազգային սովորութիւնները և համակրութիւնները, որպէսզի թիւրք դառնան, եթէ միայն խօսքը ամբողջ ազգութիւնների և ոչ առանձին անհատների մասին է»:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

31 մայիսի

ԱԹԷՆՔ: Գէորգ թագաւորը ժամանեց Պատրոս և հիացմունքով ընդունվեց ազգաբնակութիւնից:

ՀՌՈՄ: Օդագնաց դանիացի Արնցէն Րայտի աէրօպլանով բարձրացաւ 10 մետր և սլանալով անցաւ 200 մետր: Դա առաջին թռիչքն է Հռոմում:

ՄՈՍԿՎԱ: Կորշի նախագահութեամբ կայացաւ սլաւոնական կուլտուրայի ընկերութեան ընդհանուր ժողովը: Որոշված է Սօֆիա սլաւոնական համաժողովի ուղարկել պատուիրակներ Սլավինսկիին, Միլիւկօվին, Կովալէվսկիին, Պոգօդինին, Բաժէնօվին, Յարինին, Բօրօզդինին:

ՈՒՖԱ: Նիկօլօ-Բէրեզօվկա գիւղում հրդեհը լափեց 100 տուն, պօստ-հեռագրական գրասենեակը և դատաստանական քննիչի գրասենեակը, որտեղից գործերն ազատեցին:

ՕԴԵՍՍԱ: Ռուս մարդկանց դաշնակցութիւնը հեռագիր ուղարկեց Պետական Դումայի նախագահին, որով շնորհակալութիւն է յայտնում Դումայի անդամներին Ֆինլանդիայի մասին օրինագիծն ընդունելու համար ռուս ժողովրդին ցանկալի ձևով:

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ: Առաւօտեան 9 ժամ 30 րօպէին Սօկկէնրակ կայարանում տեղի ունեցաւ ապրանքատար գնացքի ընդհարում մարդատար գնացքի հետ, որ լիքն էր մարդկանցով: Սպանված են 3 հոգի, վիրաւորված են 14 մարդ. շատ են թեթև վիրաւորվածներ:

ՎԱՐՇԱՎԱ: Սենատոր Նէյդգարտ սկսեց քննել զինւորական ատեանները:

ՍԻԶՐԱՆ: Հրդեհը լափեց գաւառական Սօկօլով քաղաքի նշանաւոր մասը: Այրվեցին 206 տներ:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ մարդատար № 12 գնացքը՝ 2 ժ. 38 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 9 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 20 ր. գիշերվայ, Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 16 ր. գիշ., Բալաջարի՝ 8 ժ. 1 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժ. 48 ր. առաւ.: Արագ № 2 գնացքը՝ 8 ժ. 15 ր. առաւ., Գանձակ է հասնում 1 ժ. 28 ր. ցեր., Եւլախ՝ 3 ժ. 6 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 7 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 8 ր. գիշ., Բագու՝ 10 ժ. 53 ր. գիշ.: Պօստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 4 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 18 ր. գիշ., Եւլախ՝ 6 ժ. 26 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 23 ր. առաւ., Բալաջարի՝ 3 ժ. 13 ր. ցեր., Բագու՝ 4 ժ. 45 ր. ցեր.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար № $^{74}/_{75}$ 12 ժ. 22 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 11 ժ. 21 ր. առ., Էջմիածին կայար.՝ 4 ժ. 49 ր. ցեր., Նախիջևան՝ 10 ժ. 51 ր. գիշ., Ջուլֆա՝ 12 ժ. 29 ր. գիշ.: Ապրանքատար-մարդատար՝ 4 ժ. 15 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 10 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 38 ր. առաւօտեան, Երեւան՝ 10 ժ. 9 ր. առ.. և սրանից դէնը այլևս չէ գնում:

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5՝ 7 ժ. 31 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 11 ժ. 45 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 30 ր. առաւ.: Պօստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 5 ժ. 47 ր. երեկ., Բաթում՝ 3 ժ. 25 ր. գիշ.: Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 39 ր. գիշ., Բաթում՝ 10 ժ. 49 ր. առաւօտեան:

ԲՈՐԺՕՄ՝ մարդատար № $^{7}/_{8}$ 8 ժ. 28 ր. առ., Միխայլօվօ է հասնում 12 ժ. 42 ր. ցեր., Բօրժօմ՝ 2 ժ. 3 ր. ցեր.: Մարդատար № $^{9}/_{10}$ 3 ժ. 36 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 7 ժ. 56 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 13 ր. գիշերվայ.

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պօստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցեր.: Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ.: Մարդատար № 11՝ 6 ժ. 58 ր. առ. (այս գնացքը Բաթում չէ գնում):

ԲԱԹՈՒՄԻՑ՝ արագ № 2 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւ.: Պօստատար № 4՝ 9 ժ. 4 ր. երեկ.: Մարդատար № 6՝ 11 ժ. 4 ր. առ. (այս գնացքը Բագու չէ գնում):

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար № $^{72}/_{73}$՝ 6 ժ. 8 ր. առաւ.: Մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 33 ր. երեկոյեան:

ԲՈՐԺՕՄԻՑ՝ մարդատար № $^{9}/_{10}$ 8 ժ. 8 ր. երեկ.: Մարդատար № $^{7}/_{8}$ 6 ժ. 28 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—$12^{1}/_{2}$—$1^{1}/_{2}$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$1^{1}/_{2}$—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—$6^{1}/_{2}$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—57

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
1) «**ՏՂԱՄԱՐԴԻ ՏՐԻՊԵՐԸ** և **ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ**», պատկերազարդ, գինը 20 կօպ.: Անհրաժեշտ է ամեն մի հասակաւորի, մանաւանդ գաւառացիների համար, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ: Բազմաթիւ խորհուրդներ և դեղեր տրիպերի դէմ: 2) «**ՏՂԱՄԱՐԴԻ ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ**»: Բացարձակապէս ցոյց են տրված տղամարդի ամբողջ սեռական բնոյթը, գաղտնիքները եւ կրքերի ազդեցութիւնը: Կարճ ժամանակում գրքերը աներեւակայելի ընդունելութիւն գտան եւ սպառվելու մօտ են: Ծախվում են Թիֆլիսում՝ „Կենտրոնական“, „Գուտտենբերգ“, „Փարոս“ եւ „Կովկասեան“ գրավաճառանոցներում:
(օ. մ.) 677. 5—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԳԵՆՏ
Մ. Ա. ԳԱԺՕՆԻԱՆ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է—уголъ Михайловской и Кирочной, отель „ИМПЕРІАЛЪ“.
(ա. օ.) 679. 5—1

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Նոր պատմական զրոյց
ԱՉՔԵՐԸ ԽՕՍՈՒՄ ԵՆ
Զարդարված է ինքնուրոյն նկարներով: Գինը 25 կօպ.: Գումարով դիմել հեղինակին. Тифлисъ, Баграту Айвазянцу.
(օ. մ.) 623. 3—3

ԱՄԵՆՔԻՆ
եւ **ԱՄԵՆՈՒՐԵՔ**
(նոյնիսկ գիւղերում) այժմ մատչելի է մտցնել ՏՆԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ: Ժողովրդական, հանրամատչելի և գործնական ցուցմունք՝ անձամբ կազմակերպելու էլեկտր. լուսաւորութիւն իր սեփ. տնում, առանց մեքենայի և կայարանի, տնային հասարակ միջոցներով: Նաւթից 50% էժան է նստում: Գինը ճանապարհածախսով՝ 1 ր. 45 կ., վերադիր վճարով: Հասցէագրել՝ К-во ЭЛЕКТРОТЕХНИКЪ, С.-Петербургъ, Офицерская. 50—213.
(19, 2) (П. 56231) 551. 2—2

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.